

**ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական
 հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի
 թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի շրջանակներում կատարված
 աշխատանքի 2019 թ. Հոկտեմբեր 1 – 2020 թ. Սեպտեմբերի 28 ժամանակահատվածի
 հաշվետվություն.
 ղեկավար՝ պ.գ.դ. Ազատ Բոգոյան**

«Արևելյան աղբյուրագիտություն» Հայաստանի թվանշանային գրադարանն իր առջև նպատակ է դրել հետազոտողների ուշադրությունը սևեռել հրապարակված, ինչպես նաև դեռևս արխիվներում կամ ձեռագրատներում գտնվող բազմալեզու պատմական սկզբնաղբյուրների և արխիվային վավերագրերի վրա: Ստեղծել ենք հարթակ Արևելյան սկզբնաղբյուրներով զբաղվող մասնագետների համար: Այստեղ են հավաքվում արևելյան աղբյուրագիտության բնագավառում հետազոտությունները, ապրոքացվում են դեռևս գիտական պարբերականներում չհրապարակված սկզբնաղբյուրներ և հետազոտություններ: Գրադարանից օգտվողներին հասու են Արևելագիտական հրատարակություններն ու սկզբնաղբյուրների բազմալեզու հրատարակությունները, դրանցից շատերի թարգմանությունները: Առաջին հերթին գրադարան են մուծվում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի և Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակությունները, ինչպես նաև Հայաստանում լույս տեսած բոլոր համապատասխան բովանդակությամբ հետազոտությունները, սկզբնաղբյուրներն ու հոդվածները: Թվանշանային գրադարանի աշխատանքային խումբը իր առջև նպատակ է դրել ձայնավողը դառնալ աշխարհի տարբեր ծայրերում աշխատող մասնագետների և Հայաստանի արևելագետների միջև: Արդեն կապեր են հաստատված Մոնպելիեի, Էքս Պրովանսի, Նոր Լուվենի, Ան Արբոր համալսարանների հայագիտական և արևելագիտական կենտրոնների հետ: Հարթակը մասնագետներին ապահովում է բարձրակարգ մասնագիտական գրականությամբ, քննարկման նյութ է դարձնում արևելագետներին հուզող խնդիրները: Մեր հարթակի նորույթներից մեկն էլ Քրիստոնյա և Մահմեդական արևելքի մշակույթների ու սկզբնաղբյուրների համակողմանի հետազոտությունների խթանումն է:

Վիրտուալ գրադարանն ունի նաև ընթերցասրահ Արևելագիտության ինստիտուտում՝ կահավորված նույն ցանցին միացված երկու համակարգիչներով, որոնցից օգտվելու հնարավորություն ունեն ինչպես ՀՀ ԳԱԱ ինստիտուտների աշխատակիցները, այնպես էլ գրադարանի այցելուները այլ հաստատություններից:

Գրադարանի պարունակությունը հասանելի է ***ինտրանետ-պորտալի*** միջոցով: Բացի ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանում մուտքագրվող հետազոտություններից, ստեղծվել է նաև ինստիտուտի անվան ներքո գործող «Պատմագիրք» ինտերնետային հասցեն, որն ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում կատարված աշխատանքների մասին: Ստեղծված վիրտուալ հարթակները պարզ են, ունեն դյուրընկալելի ինտերֆեյս և հասանելի են ներքին ցանցի մաս կազմող համակարգիչներում տեղակայված վեբ-դիտարկիչների միջոցով: ***Ինտրանետ-պորտալը*** ունի տվյալների բազայում մատենագիտական տվյալների մուտքագրմամբ թվային օբյեկտներ որոնելու և գտնելու տեխնիկական հնարավորություն: Էլեկտրոնային գրադարանի զարգացման այս փուլում, անհրաժեշտ տեխնիկական ենթակառուցվածքների ապահովումից հետո, առաջին փորձերը կատարվեցին տեղափոխելու համացանցային տիրույթ: Օգտագործում ենք թվանշանային շտեմարանների ստեղծման համար նախատեսված բաց կոդով ծրագրային ապահովման փաթեթներ:

Պատրաստի թվային օբյեկտները գետեղվել են Էլեկտրոնային շտեմարանում՝ հասանելի դառնալով Գրադարանից օգտվողների համար: Գրադարանը հարգում և ճանաչում է թվայնացված օբյեկտների բնօրինակների նկատմամբ դրանց ***հեղինակների մտավոր սեփականության բացառիկ իրավունքը***: Գրադարանի և հեղինակների հարաբերությունները կարգավորվում են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով: Ինստիտուտի գրքային ֆոնդի թվայնացված և Էլեկտրոնային շտեմարանում պահպանվող նյութերը հասանելի են միայն Ինստիտուտի և ***գործընկեր գիտական հիմնարկների*** աշխատակիցներին՝ բացառապես գիտահետազոտական նպատակներով: Տեխնիկական միջոցներով բացառվում է շտեմարանից թվային կրիչների միջոցով թվային օբյեկտների դուրսբերման, վերարտադրության և ազատ տարածման հնարավորությունը: Գրադարանը բաց է նոր գաղափարների և ***համագործակցության*** առաջարկների համար: Արևելագիտական հավաքածուներ ունեցող գիտահետազոտական հիմնարկները ***գործընկերության*** հիմունքներով իրենց գրքային ֆոնդերը տրամադրում են թվայնացման համար: Կոհայի ցանցում ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտը Թվային գրադարանին է տրամադրվել մեկ TB հիշողություն: Մուտքագրված գրականությանն ավելացվել է շուրջ 2000 անուն նոր մուտքագրում, որոնք լրացվել են Էլեկտրոնային հղումներով և «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի էջում դրանք հասանելի են դարձել թվային տարբերակով:

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՈՆԿՐԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Չնայած տարվա ընթացքում համավարակի առաջացրած բարդություններին՝ պայմանավորված կարանտինային և արտակարգ դրության առաջացրած բարդություններով, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ հաճախելու դժվարությամբ, գործարկվել է A3 չափի գրքերի սկանավորման համար ձեռք բերված սկաները, որով Ե. Մելքոնյանի, Գ. Մարգարյանի և Ա. Ավետիսյանի, Է. Ղազարյանի կողմից այդ նույն ամիսների ընթացքում սկանավորվել, թվայնացվել և մուտքագրվել է ավելի քան **30.000** էջ գրականություն: Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում սկանավորման միջոցով, ընդամենը 2 սկանավորող սարքերի (A4, A3 չափերի սկանավորման հնարավորությամբ) թվայնացվել է ավելի քան **55.000** էջ գրականություն¹:
- Ծրագրի շրջանակում հաշվետու տարվա ընթացքում թվային գրադարան է մուտքագրվել 1000-ից ավելի հետազոտությունների, աղբյուրների և այլ հրատարակությունների թվայնացված տարբերակները: Այս ամիսների ընթացքում Արեւելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարանն հարստացվել է այլալեզու բազմաբովանդակ գրականությամբ (հայերեն, հունարեն, օսմաներեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, վրացերեն):
- Թվային գրադարանի շտեմարանում կարելուրվում է առանձնապես Հայոց Ցեղասպանությանը վերաբերվող տարբեր լեզուներով հրապարակված ուսումնասիրական, փաստա-վավերագրական հրատարակությունների ներբեռնումն ու հայ իրականության մեջ հրատարակված գրքերի թվայնացման գործընթացը: Դրանց թվին են պատկանում օրինակ հետևյալ մուտքագրված աղբյուրներն ու հետազոտությունները՝
- *Boris Adjemian and Mikael Nichanian, "Rethinking the "Hamidian massacres": the issue of the precedent"; Ali Sipahi, "Narrative Construction in the 1895 Massacres in Harput: The Coming and Disappearance of the Kurds"; Edip Gölbaşı, "The Official Conceptualization of the anti-Armenian Riots of 1895-1897 (Bureaucratic Terminology, Official Ottoman Narrative, and Discourses of Revolutionary Provocation)"; Selim Deringil, Boris Adjemian and Mikael Nichanian, "Mass Violence in the Late Ottoman Empire: A Discussion An Interview with Selim Deringil"; Ezgi*

¹ Հարկ է նշել, որ A3 չափի սկանավորող սարքը ձեռք է բերվել և գործարկվել ծրագրի երկրորդ եռամսյակում:

Aslan, "Türkçede Bati Kökenli Kelimeler Sözlüğü Üzerine ", *Uluslararası Türkçe Edebiyat Kültür Eğitim Dergisi Sayı: 5/1 2016 s. 534-544, Türkiye; Tarihte Ermeniler Ve Ermeni Meselesi: Ankara, 1950, British Documents On Ottoman Armenians : Vol.1-2, Ankara – 1982, Artem Ohandjanian-K.U.K.- Documente Armenien In Österreichischen Archiven (1912-1914): Band 1-4, և այլն:*

- Այս ամիսների ընթացքում Արևելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարանը հարստացել է արևելաքրիստոնեական աղբյուրագիտությանը վերաբերող (վրաց, հայ, բյուզանդական, ասորական և այլն) աղբյուներով և հետազոտություններով, ինչպես օրինակ.
- *Cyrille Toumanoff, Manuel de gé 'néalogie et de chronologie pour l 'histoire de la Caucasic chre 'tienne : Arménie, Géorgie, Albanie, Пармен Закарая, Древние Крепости Грузии, Тбилиси, 1969 г.; Вахтанг Челидзе, "Исторические Хроники Грузии XI-XII", Тбилиси, 1988 г. ; А. В. Акопян, "Двин в начале XI-хачале XII в. и новые материалы о его денежном обращении"; А. В. Акопян, "К шаддадидской нумизматике: чекан Искандара б. Шавура, правителя Двина"; Քերականութիին գրաբար լեզուիս հայոց, Հատոր Ա, ի Սոսկով, 1827, Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիին, Աղամից մինչև 1776, Աշխատասիրութեամբ Կարեն Սաթեղոյանի, Երևան, 2014, The Mythology of all Races, CANON JOHN Arnott Macculloch, D.D., Editor George Foot Moore, A.M., D.D., LL.D., Consulting Editor, Boston, 1925; The Armenian Ritual, Part Ii, F. Jaimes Dr. Issaverdenz, Venice, 1873; Гарольд Шмальцель и Гиви Нозадзе, Грузинско-азербайджанско-армянско-русский частотный словарь, Тбилиси, 2012; Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Լոյս ընծայեց՝ Ա. Խոնդկարեան, Պարիս, 1948; Frédéric Alpi, La Route Royale Sévère D'antioche el les Églises d' Orient (512-518) I Text, Beyrouth, 2009; Frédéric Alpi, La Route Royale Sévère D'antioche el les Églises d' Orient (512-518) II Sources et Documents, Beyrouth, 2009; Mirza Kazem A. Beg, Derbend-Nameh, or The History of Derbend; Translated From A Select Turkish Version and Published With the Texts and With Notes, St. Petersburg, 1851; Cilician Armenia in the Perceptions of Adjacent Political Entities (Historical-Philological Essays) / By A.ABozoyan (Ed.), V.A. Ter-Ghevondyan, R.M. Shukurov, G.G. Danielyan, Yerevan 2019 և այլն: և այլն:*
- Թվայնացված և մուտքագրված գրականության շարքում զգալի տեղ են զբաղեցնում իրանագիտական հետազոտություններն ու իրանական աղբյուրները, ինչպես օրինակ՝
- Persian literature, comprising the Sháh Námeḥ, the Rubáiyát, the Divan and the Gulistan, vol. 1 (J.H. Gottheil); A History of Persian Literature in modern times

(A.D. 1500-1924) (Edward G. Brown); A Grammar of the Persian language (William Jones); A grammar of the Persian language. To which are subjoined several dialogues; with an alphabetical list of the English and Persian terms of grammar (Ibrahim, Muhammad; A vocabulary of the Persian language - in two parts: Persian and English and English and Persian; Фольклор На Персидском Языке; Tuti-namah. The Tooti nameh, or Tales of a parrot: in the Persian language, with an English translation; THE ILKHANID BOOK OF ASCENSION: A PERSIAN-SUNNI DEVOTIONAL TALE; N. Frye)Naṣīr al-Dīn al-Ṭūsī's Memoir on Astronomy (al-Tadhkira fī 'ilm al-hay'a), vol.1 (F.G. Ragep); گلستان شیخ مصلح الدین سعدی // Gulistan Saadi Shirazi, (English translation with Persian text) افغانستان در مسیر تاریخ; // Afghanistan in the course of History, Part 1 (میر غلام محمد غبار); The Priest And The Great King : Temple Palace Relations In The Persian Empire (Lisbeth S. Fried)

روضة الصفا، محمد بن خاوندشاه بلخی، تهذیب و تلخیص دکتر عباس زریاب، ۲ مجلد، تهران ۱۳۷۳

Մուսամմադ

իբն Խվանդշահ, «Ռաուզաթ աս-Սաֆա», երկու հատորով, 2439 էջ, Թարիխ-Ե Ալամա ռա-Ե Աբբասի Իսթանդար բեկ Թորքեման (Մունշի)- (Պարսկերեն Լեզվով) և այլն:

- Մուսթաֆաբվել են նաև օսմանյան եւ թուրք գրականությանն ու լեզվաբանությանը վերաբերվող աշխատություններ, առանձին հոդվածներ, ատենախոսություններ, հանրագիտարաններ, բառարաններ եւ այլն՝
- Gabor Agoston and Bruce Masters, *Encyclopedia of the Ottoman Empire*, New York, 2009; Murat Cankara, "Rethinking Ottoman Cross-Cultural Encounters:Turks and the Armenian Alphabet", Middle Eastern Studies, 2015, Vol. 51, No. 1, 1_16; Cemal Demircioğlu, OSMANLI EDEBİYAT GELENEĞİNDE TERCÜME ESERLERİ İNCELEMEDE BİR YÖNTEM ÖNERİSİ: EYLEME ODAKLI SÖYLEM ANALİZİ, John Benjamina Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2009; Orhan Hançerlioğlu, *Dünya İnançları Sözlüğü*, 3. Basım, Remzi Kitabevi, Istanbul, 2000; Mehmed Fuad Köprülü, *Early Mystics in Turkish Literature*, 2006, Gary Leiser and Robert Dankoff; Özgen Felek, *Fehîm-i Kadîm Dîvânı'nın Tahlîli*, Doktora Tezi, Elazığ, 2007; Ramazan Ekinci, *Fehîm-i Kadîm'in Latifeleri: Tercüme-i Letâ'if-i Kibâr-i Kümmelîn*, *Turkish Studies - International Periodical For The Languages, Literature and History of Turkish or Turkic Volume 8/4 Spring 2013*, p. 749-768, ANKARA-TURKEY, Murat Umut Inan, *Writing a Grammatical Commentary on Hafiz of Shiraz: A Sixteenth-century Ottoman Scholar on the Divan of Hafiz*, University of Washington, 2012; Sait Okumuş, *KLÂSIK TÜRK EDEBİYATINDA XV. VE XVI.*

YÜZYIL NESİR VE NÂSIRLERINE BAKIŞ, Uluslararası Sosyal Arastırmalar Dergisi, Cilt: 4, Sayı: 18, Yaz: 2011; *Քրդերեն-Հայերեն, Հայերեն-Քրդերեն գործնական քառաբան*, կազմողներ՝ Վ. Լ. Կատվայան, Ա. Ա. Աբրահամյան, Գ. Մ. Մխիթարյան, Երևան, 2016 եւ այլն:

- Հաշվետու ժամանակահատվածում զգալի թիվ են կազմում մուտքագրված հայագիտական՝ հետազոտական, աստվածաբանական, գիտական ամսագրերի շարքեր, առանձին մատենաշարեր, դասախոսությունների ձեռնարկները՝
- Գանձասար Ա, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի Թեմի Աստուածաբանական Հանդես, (Գլխ. խմբ.՝ Մեսրոպ քահանայ Արամեան); Բանբեր Հայագիտության 2019 թ., N 2 (20), *Դասախոսություններ Հայ Մատենագրության Մասին*, Հրատարակություն՝ Համազգային Մշակութային Ընկերության, Տպարան՝ Համազգային ընկերության, Պեյրոթ, 1951; Մատենաշար «Հայ-Վրացական Հարաբերություններ», Գիրք 5, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 2019; Մատենաշար «Միջնադարյան ժողովրդական մշակույթ. աղբյուրներ եւ ուսումնասիրություններ» Գիրք 1-2, **Արծրունի Սահակյան**, Հայ միջնադարյան ժողովրդական մշակույթի խնդիրներ 1. Հեքիաթ 2 Խաչքար, Երևան, Նաիրի, 2017; Ազգային Մատենաշար (թվով՝ 9); **Յովհաննէս Երզնկացի Մատենագրություն**, Հատոր Ա., Ճառեր եւ Քարոզներ, **Բնագրերը հրատարակության պատրաստեցին Արմենուհի Երզնկացի-Տեր-Սրայյանը եւ Էդվարդ Բաղդասարյանը**, Երևան, Նաիրի Հրատարակություն, 2013; Լիակատար Վարք եւ Վկայաբանություն Սրբոց (թվով՝ 11); Ա.Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղվանքում և Հայոց Արևելից Կողմանքում Անտիկից մինչև ԺԳ դար (պատմա-բանասիրական քննություն), Երևան, «Գիտություն», 2020 եւ այլն:
- Արեւելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարան մուտքագրված գրականության զգալի մասը Արեւելագիտության ինստիտուտի գրադարանային եզակի նմուշ-օրինակներն են, որոնք թվայնացվել են խմբի կատարողների կողմից: Այն հնարավորություն է տվել հատկապես կորանավորուսային կարանտինային կամ արտակարգ դրության շրջանում՝ ուսումնասիրողները, ասպիրանտներն ու ուսանողները, և ընդհանրապես կայքէջից օգտվող-մասնագետները գտնեն իրենց թեմային կատարման համար անհրաժեշտ գրականությունը թվային տարբերակներով: Թվայնացման ընթացքում որպես հավելում մեր աշխատանքին, հաճախ նաեւ ընդառաջել ենք արևելագետ հայ և արտասահմանցի գործընկերների խնդրանքներին՝ իրենց հետազոտությունների (հոդվածներ, մենագրություններ թեկնածուական,

դոկտորական ատենախոսությանը), իրականացմանը օժանդակող արևելագիտական, թվային տարբերակներ չունեցող գրքերի սկանավորմամբ, դրանց թվայնացրած տարբերակները բաց հասանելիությամբ գրադարնում տեղադրելով:

- Անշուշտ, արված աշխատանքը դեռևս կարիք ունի հղկման, մշակման, խմբագրման, որը պատրաստվում ենք անել 2020 թվականի տարվա ավարտին:
- Ծրագրի ղեկավար **Ա. Բոգոյանը** իր գիտական աշխատանքի ընթացքում հավաքել է շուրջ 80 հետազոտության PDF պատճեններ (շուրջ 30000 էջ) Բյուզանդագիտության, միջնադարագիտության, խաչակրաց արշավանքների հետազոտության բնագավառներից: Ի մի են հավաքվել Քրիստոնյա Արևելքի սկզբնաղբյուրները և բնագավառի մասին հետազոտությունները, ինչպես օրինակ, անցյալ դարի ընթացքում հրապարակված «Texte und Untersuchungen», «Patrologia Graeca», «Մատենագիրք Հայոց», «Tabula Byzantini Imperii», «Regesta Imperii», «» և այլ շարքեր:
- Ա.Բոգոյանը այս հարթակը օգտագործում է նաև «Արևելյան աղբյուրագիտություն» վիրտուալ ամսագիր ստեղծելու համար: Այս ընթացքում մուտքագրվել և խմբագրվել են տարբեր հեղինակների շուրջ 30 հոդվածներ, որոնք վերաբերում են Արևելյան Աղբյուրագիտության և պատմագրության խնդիրներին: Դրանով հարթակ է ստեղծվում Արևելյան աղբյուրագիտության խնդիրների հայկական պարբերական ստեղծելու համար:
- Ծրագրի կատարող ծրագրավորող մասնագետ Ս. Հունանյանի կողմից արդեն իսկ պատրաստվել է համացանցում հասանելիություն ունեցող, Google և այլ որոնման համակարգերում հասանելի ու ինդեքսավորվող նոր կայքէջի անգլալեզու տարբերակը՝ <https://patmagirq.sci.am/> հասցեում, որով նախատեսվում է ապահովվել հասանելիություն համացանցի որոնման համակարգերում թվային այս գրադարանի ռեսուրսներն օգտագործելու համար: Աշխատանքները դեռևս ընթացիկ փուլում են, կայքը անընդհատ նորացվում և կատարելագործվում է:
- Իրականացվել է ակադեմիկոս Ն. Մառի ուսումնասիրությունների զգալի մասի սկանավորումը և թվային տարբերակների մուտքագրումը գրադարանում: Այս մուտքագրումները կարևորվում են նրանով, որ սկանավորումը կատարվում է Ն.Մառի գրադարանի օրինակներից և հեղինակը դրանց վրա կատարել է բազմաթիվ սրբագրություններ և լրացումներ:

Խմբի կատարողներ Է. Ղազարյանի, Ա. Ավետյանի, Ե. Մելքոնյանի, Գ. Մարգարյանի կողմից հաշվետու տարում սկանավորած և թվայնացրած եզակի հրատարակությունների և թվային տարբերակները չունեցող գրքերի ցանկ².

- Լ.Խաչիկյան –Փոքր Հայքի Սոցալական Շարժումների Պատմությունից:- Եր.1951թ.,112 էջ:
- 2.Գ.Վ. Արգարյան-, «Մեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը : Եր. 1965թ.,251 էջ:
- 3.Ռ.Վ. Կյուլպեկյան – Հայ- Պոտոլալական Հարաբերություններ: Եր.1986թ.,355 էջ:
- Р.Григорян –История Армянских Колонии Украины и Польши, Ер. 1980,291ст.
- Cilician Armenia In The Perceptions Of Adjacent Political Entities –Yerevan 2019, 228p.
- Վահան Տեր-Ղևոնդյան – Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան Պետությունները (1171-1260) –Եր. 2017թ.,266 էջ:
- Հայոց Եկեղեցու Հարաբերությունները Ասորիոց Եկեղեցիների Հետ: Էջմիածին 1908թ. 335էջ:
- Э. Бикерман – Хронология Древнего Мира . Москва 1975, 333с.
- Мусульманский Мир 950-1150.Москва 1981,311ст.
- Калоев – М.М. Ковалевский И Его Исследования Горских Народов Кавказа – Мос. 1979, 200ст.
- Հայաստանը և Արաբական Աշխարհը. Պատմություն և Արդի Խնդիրներ .(Արամ Տեր-Ղևոնդյանի 85-Ամյակին Նվիրված Միջազգային Գիտաժողովի Նյութերի Ժողովածու) Եր. 1914թ., 215 էջ:
- Թարիխ-Ե Ալամա ու-Ե Աբբասի Իսքանդար բեկ Թորքեման (Մունշի)- (Պարսկերեն Լեզվով)607 էջ :
- ANN K.S. LAMBTON, LANDLORD AND PEASANT IN PERSIA. –London-1953, 459էջ:
- Լիլիթ Հարությունյան –Լիբանանը 1958-1990թթ, Եր.2007թ., 337էջ:
- Mûsâmeret Ü-l-Ahbâr-Mogollar Zamanında Türkiye Selguklular: Tarihi- Ankara 1944, 146 էջ:
- Hans Grotz S.J. – La Storiografia Medioevale –Roma 1993, 113 էջ:
- Mikaël Nichanian- Byzance; Économie Et Société. Pariz 2006, 166 էջ:

² Ցանկն ամբողջական չէ, քանի որ սկսած սույն թվականի սեպտեմբերի 27-ից կայքը և Koha համակարգում թվային գրադարանի էջը հասանելի չէ, ինչ ամենայն հավանականությամբ աղբյուրների հաշվարկի գրոհի արդյունք է: Աշխատանքներ են տարվում խնդրի լուծման համար:

- Kamal Salabi –Une Maison Aux Nombreuses Demeures – Paris 282էջ:
- Γίνης Καρυγιαννοπούλου-Το Byzantino Καπάτος – Αθήνα 1983, 226էջ;
- Dionysioy A. Zakaythnot – Το Byzantion – Εναθηναίε 1972, 229 էջ;
- Խ. Հ. Ավդալբեգյան – Հոդային Հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917թթ.), Եր. 1959, 442 էջ:
- Առաքել Դավրիժեցի – Պատմություն . Եր.1988թ., 589 էջ:
- Ismail Hami Danişmend – Osmanlı Tarihi (Kronolojisi) N-1., Istanbul 1947, 530 էջ;
- Ismail Hami Danismend –Osmanlı Tarihi Kronolojisi. N-2, Istanbul 1948< 565էջ:
- Памятники Грузинского Права Т.V, (Xviiiв.)საქართველო სამართლის ძეგლები V, (Xviiiб) –Тбилиси 1974г. 692ст.
- Памятники Грузинского Права Том Vi (Xviii–Xixвв.)-Тбилиси 1977, 846 Ст.
- Памятники Грузинского Права Том Vii, Тбилиси 1981г., 868 Ст.,
- Памятники Грузинского Права Том Viii, Тбилиси 1985г., 1124 Ст.;
- Federic Alpi – La Route Royale D’antioche- Et Les Eglises D’orient (512-518) Vol. 1, Beyrouth 2009, 360 P.
- Federic Alpi – La Route Royale D’antioche- Et Les Eglises D’orient (512-518) Vol. 2, Beyrouth 2009, 176 P.
- Thierry Bianquis – Damas Et La Syrie Sous Ladomination Fatimide (359-468, 969-1076),Damas 1986, 806 P.
- Armenian History Materials. In The Archives Of Central Europe – Erevan 2001, 116 P.
- Kaiser Heinrich IV.- Göppingen 1998, 107 p.
- P.H. Newby – Saladin in the time, London 2001, 210 p.
- Иран (сборник статей) – Москва 1971, 198 ст.
- Վարդանաց աշխարհացույց . Աշխարհացույց Վարդանանց վարդապետի – Փարիզ 1960, 109 էջ:
- Louis Bréhier – Les institutions de l’empire byzantin, France 1970, 636 p.
- Louis Bréhier – Vie et mort de Byzance, Pariz 1992, 628p.
- Louis Bréhier – La civilization byzantine, Paris 1970, 623p.
- Nina G. Garsoian – The Problem of Armenian Integration into the Byzantine Empire. Washington 1998, 72p.
- Nina G. Garsoian – Same Preliminary Precisions On The Separation Of The Armenian And Imperial Churches: 1.The Presence Of “Armenian” Bishops At The First Five Oecumenical Councils – 1988, 36p.
- Norman Housley – Documents On The Later Crusades (1274-1580), London 1996, 204 P.

- Фирдоуси - «Шахнаме» т.V, Москва 1984г., 382ст.
- Фирдоуси – ШАХ-НАМЕ, Москва 1955г., 238 ст.
- Повесть временных лет ч.I, Москва 1950г., 404 ст.,
- Повесть временных лет ч.II, Москва 1950г., 556 ст.,
- Rubruck – The MISSION OF FRIAR WILLIAM OF RUBRUCK (His journey to the court of the Great Khan Möngke 1253-1255), London 1990, 312 p.
- А. Манандян – Месроп-Маштоц и борьба армянского народа за культурную самобытность. Ереван 1941г., 48 ст.
- Мнханкова В.А. – Николай Яковлевич Марр, Москва 1935г., 362 ст.
- S. KAUCHČIŠVILI – GEORGII MONACHI CHRONICON №1. Tbilisi 1920, 328 p.
- Восточный сборник . Ленинград 1926г., 200 ст.
- Учёные записки т.I, Москва 1930г., 281 ст.,
- Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Тифлисъ 1893г., 577 ст.
- Язык и литература т.I, Ленинград 1926, 428 ст.
- Язык и литература том III. Ленинград 1929г., 331 ст.
- Язык и литература том IV. Ленинград 1929г., 170 ст.
- 9. Язык и литература том V. Ленинград 1930г., 346 ст.
- Язык и история сборник I. Ленинград 1936 г., 239 ст.
- Труды ноябрьской сессии академии наук СССР 25-30 XI 1951г.: Ленинград 1952г., 416 ст.:
- Яфетический сборник т.I, Петербург 1922г., 145 ст.
- Яфетический сборник т.II, Петроград 1923г., 167 ст.
- Яфетический сборник т. III, Москва 1925г., 177 ст.
- Яфетический сборник т. IV, Ленинград 1926г., 207 ст.
- Яфетический сборник т. V, Ленинград 1927, 179 ст.
- Яфетический сборник т. VI, Ленинград 1930г., 283ст.
- روضة الصفا، محمد بن خاوندشاه بلخی، تهذيب و تلخیص دکتر عباس زریاب، ۲ مجلد، تهران ۱۳۷۳
- Մոմախանի իրն Խվանդահ, «Դաւնիգաթ աւ-Սաֆա», Էրկոն հասոյրով, 2439 էջ:
- Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne : Arménie, Géorgie, Albanie / Cyrille Toumanoff, 630 էջ
- Э. В. Кугришева, История армян в Астрахани, Астрахань, 2007, 288 էջ
- Aigle Denise, Le Fârs sous la domination mongole. Politique et fiscalité (xiiiè-xivè s.), Cahiers de Studia iranica, 31, Paris, 2005, 246 էջ

- Luisetto, Frederic, Armeniens et autres chretiens d'orient sous la domination mongole: L'Ilkhanat de Ghazan 1295-1304, Paris: Geuthner, 2007, 262 էջ
- Aigle Denise, La Correspondance Entre Souverains, Princes Et Cites-Etats, Aigle: Approches Croisees Entre L'Orient Musulman, L'Occident Latin Et Byzance (Xiiiie-Debut Xvie S.), 240 էջ:
- ՆՈՆԱՅԱՐՈ, ԺԾՈԼՈՑԻ, 2015, 1100 էջ:
- Pierre Cabivet – Histoiree D’une Entreprise Apologétique Au Ve Siècle: Paris – 1958, 367p.:
- Tarihte Ermeniler Ve Ermeni Meselesi: Ankara – 1950, 785p.:
- British Documents On Ottoman Armenians : Vol.I, Ankara – 1982, 767p.:
- BRITISH DOCUMENTS on OTTOMAN ARMENIANS (1880-1890): Vol. II, Ankara - 1983, 784p.
- GREAT SYNAXARION (ԳՐԾԾՈ ՆՇՆԱՅԵՆԱՐՈ): Tbilisi-2018, 633p.:
- Artem Ohandjanian-K.u.K.- Documente Armenien in Österreichischen Archiven (1912-1914): Band I, 787p.:
- Artem Ohandjanian-K.u.K.- Documente Armenien in Österreichischen Archiven (1915-1917): Band II, 844 էջ
- Artem Ohandjanian-K.u.K.- Documente Armenien in Österreichischen Archiven (1918 Jän.-Juli): Band III, 662p.:
- Artem Ohandjanian-K.u.K.- Documente Armenien in Österreichischen Archiven (August-Dezember 1918): Band IV, 796p.
- *Georgia in the 11th - 12th centuries* by *Mariam Lordkipanidze* · *Georgia in the 11th - 12th centuries.* by *Mariam Lordkipanidze*. Print book. English. 1987. Tbilisi, 186 էջ
- RAUZAT (պարսկերենով) h.I, 529 էջ:
- RAUZAT (պարսկերենով) h.II, 832 էջ:
- Թովմա Մեծովոցի , Երևան 1999թ., 377 էջ:
- Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար (վրացերենով) - 659 էջ:
- Հայ միջմադարյան գրականության միջազգային գիտաժողով (Երևան, 15-19 սեպտեմբերի 1986) զեկույցների դրույթներ: Երևան 1986թ., 254 էջ:
- Եզնիկ քին. Պետրոսյան – Հայ եկեղեցու վերաբերմունքը սրբապատկերների մկատմամբ: Աթենք – 1987թ. 359 էջ:
- Շողակաթ եկեղեցական մշակութային բանասիրական հանդես 1995: Ստանպուլ -1995թ., 285 էջ:
- Эвелина Кутрышева – История армян в Астрахани : Астрахан-2007г., 287ст.
- ORHAN PAMUK – 400 էջ:
- ORHAN PAMUK- 470 էջ:

- Վահրամյանների իշխանությունը – 238 էջ:
- Great Synaxarion (վրացերեն)- Tbilisi -2018, 632 էջ:
- TARIH DERGISI XXXII – ISTANBUL- 1979, 1047 էջ:
- Корпус арабских надписей Армении (VIII – XVI вв.), выпуск I, Ереван 1987г., 233 ст.:
- Страницы из истории Грузии : Тбилиси 1965г., 199 ст.
- Документы по взаимоотношениям Грузии с северным Кавказом в XVIII в.: Тбилиси – 1968, 333 ст.:
- Армяно – русские отношения в XVIII веке (1760-1800 гг.) том IV, Ереван 1990г., 581ст.:
- Курдское движение в новое и новейшее время: Москва – 1987г., 303ст.:
- MUSTAFA REŞİT PAŞA ve TANZİMAT: Ankara 1954, 656р.
- М.А. ГАСРАТЯН- Курды Турции в новейшее время: Ер.-1990г., 385ст.
- Р. Л. МАНАСЕРЯН – Гунны в отношениях с Ближним Востоком и Римским Заподом: Санкт-Петербург-2019г., 118 ст.
- Ակակի Շանիձե – Հին վրացերենի քերականություն: Երևան-1983թ., 224 էջ:
- Հ. Գ. Մարգարյան – Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր: Եր.- 1980թ.:
- А.Г. ПЕРИХАНИЯН – Сасанидский судебник: Ер.- 1973г., 572 ст.
- Л.Н. Зограбян – Орография Армянского нагорья: Ер.- 1979г., 117ст.
- Ռուբեն Մանասերյան – Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ: Եր.- 1997թ., 215 էջ:
- Հ.Կ. Գաբրիելյան – Հայկական Լեոնաշխարհ: Եր.- 2000թ., 374 էջ:
- გურამ მაისურაძე - ქართველი და სომეხი ხალხების შროტიერთობა
- XIII-XVIII საშუკუნებში: თბილისი-1982 წ., 329 էჯ:
- (Взаимоотношения грузинского и армянского народов в XIII – XVIII веках: Тбилиси -1982, 329 ст.)
- DER KREUZZUG FRIEDRICH BARBAROSAS (1187-1190): Stuttgart-2002, 191 էջ:
- Ռ.Լ. Մանասերյան - Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ: Երևան- 2007թ., 260 էջ:
- OSMANLI TARİHİ – II.CILT, Ankara – 1949, 760 էջ:
- OSMANLI TARİHİ - III.CILT, 1 kısım, Ankara -1978, 687 էջ:
- OSMANLI TARİHİ - IV.CILT, 1 Bölüm, 2 Baskı, Ankara 1978, 687 էջ:
- OSMANLI EVLETİ TEŞKİLÂTINA MEDHAL. Istanbul -1941, 549 էջ:
- OSMANLI TARİHİ III Gilt, 2.kısım. XVI yüzyıl ortalarından, XVII yüzyıl sonuna kadar. Ankara – 1954, 656 էջ:

- Մ.Կ. Զուլալյան – Արևմտյան Հայաստանը XIII – XIII դդ.: Երևան – 1980, 425 էջ:
- Մ.Կ. Զուլալյան – Հայ ժողովրդի XIII-XVIII դդ. պատմության հարցերը ըստ եվրոպայի հեղինակների: Գիրք Ա., Երևան 1990թ., 363 էջ:
- Մ.Կ. Զուլալյան – Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ: Երևան- 1966, 261 էջ:
- *Դիվան Հայաստանի արաբերեն վիմագրության VIII-XVI դդ.*, ՊԲԱԿ Ա, Երևան, 1987

Հարկ է նշել նաև, որ անկախ ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի ավարտվելու հանգամանքից և ֆինանսավորման դադարեցումից՝ ծրագիրը չի ընդհատվելու, ծրագրի կատարողներ Է. Ղազարյանը և Ա. Ավետիսյանը շարունակում են մուտքագրել թվայնացրած և հավաքագրած թվային գրականությունը, ծրագրի կատարող Գ. Մարգարյանը և Ս. Հունանյանը շարունակելու են աշխատել նոր կայքի՝ <https://patmagirq.sci.am/> լրամշակման և բարելավման, ինչպես նաև նույն կայքի հայալեզու տարբերակի պատրաստման աշխատանքները: Խմբի կատարողները Գ. Մարգարյանը և Ե. Մելքոնյանը շարունակելու են ձեռք բերված սկանավորման սարքերով արևելագիտական նոր գրականության սկանավորումն ու մուտքագրումը թվային գրադարանի նոր կայքում՝ զուգահեռ Koha համակարգում Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարանի արդեն վերբեռնված և մուտքագրված ռեսուրսները տեղափոխելով և տեղադրելով նոր գրադարանի կայքում:

Ծրագրի ղեկավար՝ պ.գ.դ. Ա.Բոգոյան

29.09.2020 թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«Արցախի ազատագրված տարածքների ամրոցների ուսումնասիրություն»

գիտական ծրագրի

01.10.2019 - 01.10.2020

կատարած աշխատանքների

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Արցախի ազատագրված տարածքների ամրոցների ուսումնասիրություն» ծրագիրը իրականացնող գիտահետազոտական խումբը հետազոտություններ է կատարել Արցախի Հանրապետության Քաշաթաղի, Հադրութի և Շահումյանի շրջանների ազատագրված տարածքներում:

Դաշտային հետազոտությունների ընթացում խնդրո առարկա ամրոցներում կատարվել են հուշարձանի և շրջակա տարածքի օդալուսանկարահանումներ՝ անօդաչու թռչող սարքով /դրոնով/, հետազոտվել է տարածքի վերգետնյա նյութը՝ խեցեղեն և այլ թվագրող արտեֆակտներ հայտնաբերելու միտումով, չափագրվել են որոշ ճարտարապետական մանրամասեր և լուսանկարվել են հուշարձանի առանձին հատվածներ և ընդհանուր տեսարաններ: Կամերալ աշխատանքների ընթացքում օդալուսանկարահանման նյութերը ենթարկվել են համակարգչային մշակման, որի արդյունքում կազմվել են հուշարձանի օրտոգոնալ լուսապատկերը և տեղահանույթը՝ հորիզոնականների 1.0 մ բարձրությամբ: Հորիզոնականների նման հարաբերությունը ամրոցների պարագայում ամենարդյունավետն է, ինչը թույլ է տալիս առավել ճշգրիտ տեղադրել հանույթի վրա երևացող կառույցների հետքերը: Այս մեթոդով ստանում ենք տեղահանույթի վրա դրված ամրոցի երևացող շինությունների գլխավոր հատակագիծը: Սա այն առավելագույն գիտական ինֆորմացիան է, ինչն այսօր հնարավոր է կորզել խնդրո առարկա ամրոցներից՝ առանց պեղումներ կատարելու: Նշենք, որ այս մեթոդաբանությամբ Հայաստանում դեռ ոչ մի խումբ չի աշխատում:

Հաշվետու ժամանակաշրջանում խումբը հետազոտել է հետևյալ ամրոցները.

Քաշաթաղի շրջանում

գ. Բերդիկ

1. Ամրոց Բերդիկ 1
2. Ամրոց Տաք ջուր

գ. Տանձուտ

3. Ամրոց Տանձուտ 2
4. Ամրոց Աղավնաբերդ /Ղուշի դալա/
5. Ամրոց Մկնատամի բերդ /Ղուշի 1/
6. Ամրոց Սթունիս /Ղալաջիկ/

գ. Ծիծեռնավանք, Արահուծ տեղամաս

7. Ամրոց Դաշտաքար /Դուզ դաղ/

Շահումյանի շրջանում

գ. Ջուար, Կալաբոնի տեղամաս

8. Ամրոց Կոդոր /Կալաբոնի/

գ. Ծար, Զիվել տեղամաս և Ալ լճերի տարածք

9. Ամրացված բնակատեղի Զիվել 2
10. Մեզալիթյան պարիսպներ

Հադրուրի շրջանում

գ. Ջրաբերդ /Մուլքուդարա/

11. Ամրոց Ջրաբերդ /Կարմիր քար/

Նշված ամրոցների ցանկից, Բերդիկ 1-ը, Տաք ջուր-ը և Զիվել 2-ը հայտնաբերվել ու փաստագրվել են այս գիտական թեմայի ծրագրով իրականացված դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում:

Հաշվետու տարին խնդրահարույց էր Արցախում դաշտային աշխատանքների իրականացման առումով: Տարեսկզբին, համաճարակով պայմանավորված, մեր մուտքը Արցախ փակվեց մոտ երեք ամսով: Համաճարակի սահմանափակումները մեզ դրդեցին հետազոտել Արցախի Հանրապետության Շահումյանի և Քաշաթաղի շրջանների բարձր լեռնային՝ Այլաղ և Ալ լճերի ալպյան մարգագետինների տարածքը: Այս առանձնացված լեռնաշխարհի մուտքը Վարդենիսի և Սյունիքի տարածաշրջաններից է և այդ ժամանակ արգելափակված չէր:

Չնայած շատ բարդ եղանակային պայմաններին, այնուհանդերձ, հնարավոր եղավ մասնակի հնագիտական հետախուզում կատարել նշված լճերի շրջակայքում:



Մեծ Ալ լիճը արևամուտին



Այլադ լիճը հարավից

Տարածքը 2700-3200 մ բարձրության վրա է և արտակարգ հարուստ բրոնզ-երկաթեդարյան դամբարաններով, սեզոնային բնակատեղիներով, ժայռապատկերներով, վիշապանման կոթողներով ու մեգալիթյան պարսպաշարերով: Այստեղ հնագիտական հետախուզում երբեք չէր կատարվել և որը առանձին թեմայի նյութ է:

Մեծ Ալ լճի հյուսիսային ափեզրից սկսվող մեգալիթյան պարիսպը, որի մոտ 1,5 կմ հատվածը մենք կարողացանք օդալուսանկարել՝ ձգվում է մոտ 7 կմ հասնելով Վարդենիսի շրջանի Գեղաքար գյուղի մատույցները և հստակ երևում է Google ի տիեզերական լուսանկարներում: Այս բացառիկ հուշարձանը լուրջ հետազոտության կարիք ունի և մեր ներկայացրած նյութերը այդ գործընթացի առաջին փորձն են: Նման պարսպագծեր երևում են նաև այլ կետերում, որոնց, սակայն, մենք չհասանք:



Ժայռապատկեր Այլադ լճի մոտ



Ժայռապատկեր Փոքր Ալ լճի մոտ

Այլադ լճի մոտ հայտնաբերվեց ու չափագրվեց մի եզակի դամբարանային կառույց՝ սրբատեղի: Այն տեղակայված է հնագույն սեզոնային բնակատեղիի և արհեստական լճակի միջնամասում և իրենից ներկայացնում է կողքի վրա ցից

կանգնած սալերից շարված երկու համակենտրոն շրջանակների կենտրոնում



Վիշապաքար Մեծ Ալ լճի մոտ



Մենհիր Այլաղ լճի մոտի դամբարան-սրբատեղիում


տեղակայված դամբարանիսուց կամ հարթակ: Վերջինիս եզրերին, միմյանց դեմ դիմաց, կանգնեցված են եղել երկու՝ 3,5 մ. բարձրությամբ մենհիրներ /մենաքարեր/: Դամբարանը հնում կողոպտվել է, իսկ կանգնած քարերը պառկած են տեղում: Հուշարձանը օդալուսանկարահանվեց 3D պատկեր ստանալու պահանջներով: Հուսով ենք, որ եռաչափ մոդելավորումով հնարավոր կլինի ստանալ այս եզակի հուշարձանի նախնական տեսքի վերակազմությունը, ինչը կդառնա Հայաստանի հնագիտական հուշարձանների առաջին եռաչափ ռեկոնստրուկցիան:

Թեպետ Այլաղ և Ալ լճերի բարձրավանդակում ամրոցներ չհայտնաբերվեցին, սակայն հավաքված բոլոր նյութերը նորություն են և առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գիտական հանրության համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրված ամրոցները

Քաշաթաղի շրջան, գ. Բերդիկ

Ամրոց Բերդիկ 1



1.

Բերդիկ 1 ամրոցի օրտոֆոտոպատկերը

Հուշարձանի անվանումը՝

Այլ անվանումներ

Անվանման աղբյուրը

Բաղադրամասերը

Թվագրությունը՝ (նախնական)

Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրոց Բերդիկ 1

Ղալաչա

շրջակա բնակավայրը

պատեր, պարիսպներ

Ք. ա 2-1 հզ

2019 թ.

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը

Շրջան

Բնակավայր

Բնակավայրի նախկին անվանումները՝

Աշխարհագրական կոորդինատները՝

Բարձրությունը ծովի մակերևույթից՝

Դիրքը բնակավայրի նկատմամբ՝

Ջրագրությունը՝

Ուղղիդ տեսողական կապը՝

Արցախի Հանրապետություն

Քաշաթաղի

գ. Բերդիկ

Ղալաչա

N. 39 41 45,7 E. 46 17 29,0

1421 մ

գյուղի մեջ


Աղավնո գետի ձախ ափ

Հնագիտական նկարագրություն

Գտնվում է Բերդիկ գյուղի արևմտյան եզրին՝ երկարավուն լեռնաբզկի արևելյան վերջավորության վրա: Լեռնաբզկուկը կազմավորված է Աղավնո գետի և նրա հյուսիսային վտակի /ներկայումս՝ սելավատարի/ միջնամասում և նրա ամրոցանիստ հատվածը բարձր է շրջակա գյուղի նիշից 15-20 մետրով:

Խորհրդային տարիներին ամրոցի հիմնական հատվածը կառուցապատված ու բնակեցված էր, ուստի և հնագույն ամրոցի կառուցապատման տարրերը խիստ խաթարված են ու շատ դեպքում ավերված ու ծածկված հետագա շինություններով: Շատ թե քիչ անխաթար է մնացել բարձրադիր մասում տեղակայված ամրոցի միջնաբերդը, որը դուրս էր մնացել գյուղի հիմնական հատվածից: Այստեղ հնարավոր եղավ փաստագրել հնագույն պարիսպներ ու շինությունների հատվածներ: Միջնաբերդի բարձունքը եզերող պարիսպը պահպանվել է հրվանդանի հյուսիսային ու հարավային եզրագծերում և կառուցված է մեծ անմշակ քարերի չոր, կիկլոպյան շարվածքով: Նրա արևմտյան կողմը մասամբ ավերված է, իսկ արևելյան՝ բնակավայրին հարող պարսպագիծը նկատվում է հետագայում կառուցված բնակելի տների ու տնամերձերի քարե ցանկապատերի մեջ: Ամրոցի արևելյան ստորոտում ընկած ամրոցի հիմնական հատվածը ավերված է: Դատելով շինտեխնիկայից և սակավաթիվ խեցեղենից ամրոցը բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հուշարձան է:

Ամրոց Տաք ջուր



Տաք ջուր ամրոցի տեղահանությունը



Տաք ջուր ամրոցի օրտոֆոտոպատկերը

Հուշարձանի անվանումը՝	Ամրոց Տաք ջուր
Այլ անվանումներ	-
Անվանման աղբյուրը	մտակա հանգստավայրը
Բաղադրամասերը՝	պարիսպ
Թվագրությունը՝ (նախնական)	5-7 ըդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝	2020 թ

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը	Արցախի Հանրապետություն
Շրջան	Քաշաթաղի
Բնակավայր	գ. Բերդիկ
Բնակավայրի նախկին անվանումները	Ղալաչա
Աշխարհագրական կոորդինատները՝	N. 39 41 35,4 E. 46 16 45,1
Բարձրությունը ծովի մակերևույթից՝	1520 մ
Դիրքը բնակավայրի նկատմամբ՝	1,2 կմ հվ-արմ
Ջրագրությունը՝	Աղավնո գետի ձախ ափ


Ուղղիղ տեսողական կապը՝ -

Հնագիտական նկարագրություն

Գտնվում է Բերդիկ գյուղից 1,4 կմ հարավ-արևմուտք, Բերդիկից Տաք ջուր հանգստավայր տանող ավտոճանապարհի միջնամասում՝ ճանապարհից անմիջապես ներքև ընկած ձեռակերտ տափարակին: Տափարակը կազմավորվել է Աղավնո գետի ձախափնյա ձորագրի վրա կախվող ժայռային ելուստի ճակատային գիծը պարիսպ-հենապատով ամրացնելու արդյունքում:

Պարիսպը ամբողջովին երևում է Աղավնոյի ափով վերջերս անցկացված ավտոճանապարհից: Պարիսպ-հենապատը շարված է ճեղքած, անմշակ տեղական բազալտից՝ առանց կրաշաղախի: Այն մի փոքր թեքվածություն ունի դեպի ներս, գնում է բնական ժայռի խիստ անհարթ ճակատային գծով և պահպանվել է տեղ տեղ մինչև 6,0 մ բարձրությունը: Փոքր ամրոց է, հատակագծում՝ անկանոն կիսաշրջանի տեսքով, որտեղ պարիսպը, բացի հրվանդանի հարավային, գետահայաց ճակատից, ներառում է նաև արևելյան ու արևմտյան եզրերի մի մասը: Երևացող պարսպագիծը իր ամբողջ ընթացքում գրեթե չի բարձրանում այսօրվա գետնի մակարդակից: Ամրոցը վատ է պահպանվել: Ավտոճանապարհը լայնեցնելիս քարերն ու հողերը լցվել են հուշարձանի վրա՝ ծածկելով նրա հյուսիսային մասը: Այսօր երևում է ամրոցի կեսը՝ մոտ 50 x 80 մ չափերով: Հուշարձանի մակերեսին որևէ շինության հետք չի երևում: Վերգետնյա խեցեղենը սակավ է: Դատելով պարսպի շարվածքից կարելի է ենթադրել, որ ամրոցը վաղ միջնադարից եկող հուշարձան է:

-գ Տանձուտ
Ամրոց Տանձուտ



Տանձուտ 2 ամրոցի տեղահանությունը



Տանձուտ 2 ամրոցի օրտոֆոտոպատկերը

3.

Հուշարձանի անվանումը՝	Ամրոց Տանձուտ 2
Այլ անվանումներ	-
Անվանման աղբյուրը	մոտակա բնակավայրը
Բաղադրամասերը՝	ամրոց
Թվագրությունը՝ (նախնական)	Ք.ա 1-ին հզ.
Հայտնաբերման տարեթիվը՝	2014 թ

Աշխարհագրական տվյալներ


Գտնվելու վայրը	Արցախի Հանրապետություն
Շրջան	Քաշաթաղի
Բնակավայր	գ. Տանձուտ
Բնակավայրի նախկին անվանումները՝	Ղարաղջլազ
Աշխարհագրական կոորդինատները՝	N. 39 40 41.6 E. 46 22 01.1
Բարձրությունը ծովի մակերևույթից՝	1412
Դիրքը բնակավայրի նկատմամբ՝	2,0 կմ աե
Զրագրությունը՝	Աղվնոյի ձախ ափ
Ուղղիղ տեսողական կապը՝	Ամրոցներ՝ Աղավնաբերդ, Մկնատամի բերդ, Խոժոռաբերդ, Տանձուտ 1., Սթունիս, Սոնասար

Հնագիտական նկարագրություն

Գտնվում է գյուղից մոտ 2,0 կմ հյուսիս-արևմուտք՝ Աղավնո գետի ձախափնյա ժայռագծի եզրին, Խոժոռաբերդ ու Տանձուտ 1 ամրոցների միջնամասում, Աղավնաբերդ, Մանուկ բերդ և Սթունիս ամրոցների հանդիպակաց ափին, որոնց հետ ունի նաև ուղղիղ տեսողական կապ: Զբաղեցնում է գետահովտի վրա կախված լեզվակաձև հրվանդանի գագաթը և մասամբ արևելյան լանջը: Ամրոցը մեծ չէ՝ մոտ 50 x 30 մ չափերով է և հատակագծում մոտենում է կոր անկյուններով եռանկյունուն: Ամրոցը վատ է պահպանվել՝ շինությունները դժվարությամբ են ուրվագծվում: Հրվանդանի եռանկյունաձև գագաթը ներփակված է հատվածաբար երևացող ամրապարսպով, որի ներսում նկատվում են առանձին պատերի ու շինությունների հետքեր: Հրվանդանի հյուսիսային լանջը զառիթափ է, պատված թփուտներով, իսկ հարավային՝ արևահայաց լանջին նկատվում է հիմնական պարսպագծից իջնող և նրան միացող առանձին պատաշարով ներփակված հատված: Ուշագրավ է, որ հրվանդանի մայր ծակոտկեն ապարը միայն մասամբ է օգտագործվել կառույցների պատերի շարերում, որի հիմնական շինանյութը՝ գետաեզրից բերված գլաքարերն են: Կառույցների պատերի կապակցողը կավահողն է:

Վերգետնյա նյութը սակավ է, բայց դատելով ամրոցի դիրքից, չափերից, շին տեխնիկայից, կարելի է ենթադրել, որ այն Ք.ա. 1-ին հազարամյակի վերջին քարոդին վերաբերվող պահակային ամրոց-դիտակետ է:

Ամրոց Աղավնաբերդ /Ղուշչի դալա/



Աղավնաբերդ ամրոցի տեղահանույթը



Աղավնաբերդ ամրոցի օրտոֆոտոպատկերը

4.

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ
Անվանման աղբյուրը
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրոց Աղավնաբերդ
Ղուշչի դալա
Լեռան ժող. անվանումը
Ք.ա. 3-1 հզ.
2013 թ.

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը
Շրջան
Բնակավայր
Բնակավայրի նախկին անվանումները՝
Աշխարհագրական կոորդինատները՝
Բարձրությունը ծովի մակերևույթից՝
Դիրքը բնակավայրի նկատմամբ՝
Զրագրությունը՝

Արցախի Հանրապետություն
Քաշաթաղի
գ. Միրիկ, Ղուշչի տեղամաս
Միրիկ
N. 39 40 05,3 E. 46 21 27, 2
1502 մ
0,8 կմ հվ-աե
Աղավնո և Սթունիս գետերի խաչմերուկ

Ուղղիղ տեսողական կապը՝

Մկնատամի բերդ, Տանձուտ 1 Տանձուտ 2,
Խոժոռաբերդ, Սթունիս, Սոնասար

Հնագիտական նկարագրություն


Գտնվում է Միրիկ գյուղից 3,0 կմ հարավ-արևելք, նախկին Ղուշչի գյուղի հարավային կողմով, գեպի Աղավնո գետը իջնող լեռնաբազկի գագաթնագծին վեր խոյացող «Ղուշչի դալա» կոչված մեծ, կոնաձև բարձունքի վրա: Լեռնաբազկի արևմտյան՝ գետամերձ ստորոտին է գտնվում Մկնատամի խաչ հայտնի եկեղեցին:

Ամրոցը զբաղեցնում է կոնաձև բլրի գագաթն ու լանջերը: Այն ամրացված է պաշտպանական պարսպապատերի երկու ներգծված օղակներով, որոնցից ներքինը գնում է բլրի ստորոտի պարագծով և եզերում է հիմնական բնակատեղին, իսկ վերինը ընդգրկում է բլրի համեմատաբար հարթ գագաթին նստած միջնաբերդը: Միջնաբերդի կենտրոնում ուրվագծվում է մի մեծ, ուղղանկյուն շինություն, հավնաբար՝ դղյակը:

Պարիսպները շարված են մեծածավալ, անմշակ, ճեղքած քարերի չոր, կիկլոպյան շարվածքով: Պարսպագծերը հիմնականում պատված են հողով ու խոտածածկությամբ, իսկ երևացող հատվածների պահպանված բարձրությունը չի գերազանցում 1,5 մ: Երկու պարսպները եղել են նաև բնակելի դարավանդների հենապատեր և այսօր փաստագրվում են որպես դարավանդների եզրագծեր:

Պարսպապատերի միջև ընկած լանջերի թեքադիր տարածություններում պահպանված առանձին պատաշարերը, վկայում են պարսպապատերի ներսի տարածքի երբեմնի կառուցապատման մասին: Պատաշարերի հետքեր կան նաև միջնաբերդում և դղյակի ներսում: Ամրոցի մուտքը ուրվագծվում է ստորին պարսպի արևմտյան կետում, ուր ամրոցանիստ բլրին միանում է արևմուտքից իջնող լանջի ջրբաժանը: Բնակատեղիի բաց, ոչ պարսպապատ հատվածը տարածվում է արևմտյան սարահարթի սկզբնամասում, որից հետո սկսվում է ընդարձակ դամբարանադաշտը: Հուշարձանում հավաքված վերգետնյա խեցեղենը թվագրում է Ք.ա. 3-1 հզ.

Ամրոց Մկնատամի բերդ



Մկնատամի բերդի տեղահանույթը



Մկնատամի բերդի օրտոֆոտոպատկերը

5.

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ՝
Անվանման աղբյուրը
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրոց Մկնատամի բերդ
Ղուշչի 1, Ուշաղ կալասի,
Ժողովրդական անվանումն է
Ք.ա. 19-7 դդ դդ
2014 թ.

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը՝
շրջան՝
բնակավայր
Բնակավայրի նախկին անվանումները՝
Աշխարհագրական կորդինատները՝
Բարձրությունը ծովի մակերևույթից՝
Ջրագրությունը՝

Ուղղիղ տեսողական կապը՝

Արցախի Հանրապետություն,
Քաշաթաղի
գ. Միրիկ, Ղուշչի տեղամաս
Միրիկ
N. 39 40 22,3 E. 46 21 21,2
1457 մ
Աղավնո գետի աջ ափին


Ամրոցներ՝ Աղավնաբերդ, Սթունիս,
Սոնասար, Տանձուտ 1,
Տանձուտ 2, Խոժոռաբերդ

Հնագիտական նկարագրություն


Փոքր ամրոց է, որ գտնվում է ներկայումս անբնակ, Ղուշչի գյուղի արևելյան եզրին բարձրացող և Աղավնո գետահովտի վրա գերիշխող սրածայր, ցից ժայռի գագաթին: Վեր խոյացող ժայռագագաթը երեք կողմերից եզերվում է ուղղահայաց կտրվող բազալտե անմատչելի ծերպերով, և հասանելի է միայն հյուսիս-արևմուտքից՝ մեծ թեքությամբ իջնող զառիթափ լանջով: Հուշարձանը ունի երկու շինարհարական շերտեր՝ բրոնզ-երկաթեդարյան և միջնադարյան: Հնագույն՝ բրոնզ-երկաթեդարյան ամրոցի միջնաբերդը նստած է ժայռի մոտ 20 x 50 մ չափերով հարթ գագաթին և արևելյան՝ գետահայաց եզրագծով փակված է անմշակ, մեծ, խորանարդաձև ժայռաբեկորներից շարված կիկլոպյան պարսպով: Ներսում նկատվում են նման շարվածքով ընդլայնական երկու պատեր, որոնք բաժանում են միջնաբերդի մակերեսը 3 անհավասար հատվածների: Երկու հատվածներում պահպանվել են մոտ 2,5 մ տրամագծով, ակնհայտորեն ձեռակերտ խոր փոսեր, հավանաբար՝ ջրավազաններ: Միջնաբերդից մոտ 3-5 մ ներքևի հորիզոնով գնում է ամրոցի երկրորդ պաշտպանական գծի պարիսպը, որը, ինչպես և առաջինը, փակում է միայն հնարավոր մոտեցման ուղղությունը: Երկու պարսպների միջնամասի թեքադիր տեղանքում նկատվում են կառուցապատման հետքեր: Երկրորդ պարսպագծի հարավ-արևելյան անկյունից ներքև նստած մի փոքր, պարսպագծով ներփակվող արհեստական դարավանդին, պահպանվել են մի ուղղանկյուն սենյակի հիմնապատերը:

Ամրոցանիստ լեռան գետահայաց լանջի վերնամասում, հին ամրոցի պարսպից ներքև գնում է մանր ճեղքած բազալտի, տափակ սալերից կրաշաղախով շարված մոտ 50-60 մ երկարությամբ միջնադարյան պարսպագից: Այն կազմում է ոչ մեծ արհեստական դարավանդ, ուր կան նաև այլ պատերի հետքեր: Ամենայն հավանականությամբ, Մկնատամի բերդը հանդիսացել է մոտ 0,5 կմ հարավում գտնվող Աղավնաբերդ ամրոց-բնակատեղիի պահակային ամրոցը:

Ամրոց Սթունիս



Սթունիս ամրոցի տեղահանույթը և հատակագիծը



Սթունիս ամրոցի օրտոֆոտոպատկերը

6.

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ
Անվանման աղբյուրը
Բաղադրամասերը՝
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրոց Սթունիս
Ղալաջիկ
մտակա պատմական բնակավայրը
պատեր ու պարիսպներ
Ք.ա 1-ին հզ.
2014 թ

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը
Շրջան

Բնակավայր

Բնակավայրի նախկին անվանումները

Աշխարհագրական կոորդինատները՝

Բարձրությունը ծովի մակերևույթից՝

Դիրքը բնակավայրի նկատմամբ՝

Ջրագրությունը՝

Ուղղիդ տեսողական կապը՝

Արցախի Հանրապետություն

Քաշաթաղի

գ. Տանձուտ

Ղարաղշլաղ

N. 39 39 49,9 E. 46 21 45.3

1464 մ

1.8 կմ արևմուտք

Աղավնո և Սթունիս գետերի միջև

Ամրոցներ Աղավնաբերդ, Մկնատամի
բերդ, Տանձուտ1, Տանձուտ 2, Խոժոռաբերդ,
Սոնասար

Հնագիտական նկարագրություն


Գտնվում է Տանձուտ գյուղից մոտ 2 կմ արևելք, Աղավնո գետի և նրա աջակողմյան՝ Սթունիս վտակի միախառնման կետից մոտ 1 կմ հարավ-արևմուտք ընկած լեռնաբազկի ծայր հյուսիսային, ամենաբարձր՝ Ղալաջիկ կոչված բլրի գագաթին: Բլրի կոնաձև եռաստիճան գագաթը ներփակվում է գագաթնամասի ժայռագծով գնացող հիմնական պարսպով: Այն շարված է մեծ, ճեղքած քարերից չոր շարվածքով և երևում է հատվածաբար: Շրջապարիսպը, իր ընթացքի զգալի մասում նստած է բնական ժայռագծի վրա և կանգուն է մինչև 1,5-2 մ բարձրությունը: Հիմնական պարսպից 6-8 մ բարձր նիշով գնացել է ամրոցի երկրորդ պաշտպանական պարիսպագիծը: Այն կառուցված է նույն տեխնիկայով, բայց ավելի վատ է պահպանվել: Երկրորդ պարսպի միջնամասում բարձրանում է ամրոցի միջնաբերդի բլուրը: Վերջինիս գագաթին պահպանվել է մեծ դամբարանախուց հիշեցնող «օղուգատիպ», իջեցուկ շինություն: Միջնաբերդի պարիսպը չի երևում և, հավանաբար, չի էլ եղել: Բլրի գագաթի երաստիճանությունը ձեռակերտ է և պայմանավորված է երկու պարսպագծերով: Առաջին ու երկրորդ պարսպագծերի միջնամասում պահպանվել են կառուցապատման հետքեր:

Երկու պարիսպները բացվում են հարավ-արևմտյան կողմում, ուր ամրոցի գլխավոր մուտքն է: Այն կազմակերպված է որպես երկու ուղղանկյուն, զանգվածեղ աշտարակների միջով գնացող անցում, որի ներսում՝ ոչ մեծ բաց ծավալ է: Լեռնաբազկի արևմտյան ստորոտից՝ Սթունիս գետակի ափից մոտ 700 մ երկարությամբ պատմական ճանապարհը տանում է դեպի ամրոց: Ճանապարհի եզրագիծին տեղ տեղ պահպանվել են ցից քարերից շարված պատեր և նրա ուրվագիծը հստակ երևում է:


Ամրոցում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց դատելով պատաշարերից, այն բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հուշարձան է:

գ. Ծիծեռնավանք, Արախուծ տեղամաս

Ամրացված բնակատեղի Դաշտաքար



Դաշտաքարի տեղահանույթը



Դաշտաքարի օրտոտոտուպատկերը

7.

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ
Անվանման աղբյուրը
Բաղադրամասերը՝
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրացված բնակատեղի Դաշտաքար
Դուրզ դաղ
իր դիրքը
պատաշարեր
Ք.ա 3-1-ին հզ.
2014 թ

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը
Շրջան
Բնակավայր
Բնակավայրի նախկին անվանումները
Աշխարհագրական կոորդինատները՝
Բարձրությունը ծովի մակերևույթից՝

Արցախի Հանրապետություն
Քաշաթաղի
գ. Արախուծ, Ծիծեռնավանք համայնքի
Մալիբեյ
N. 39 37 17,8 E. 46 27 11,9
1045 մ

Դիրքը բնակավայրի նկատմամբ՝	1.0 կմ արևելք
Զրագրությունը՝	Աղավնոյի աջ ափ
Ուղղիդ տեսողական կապը՝	---

Հնագիտական նկարագրություն


Գտնվում է Արահուծ, նախկին Մալիբեյ գյուղից մոտ 1 կմ արևելք, Աղավնո գետի և նրա աջակողմյան վտակի միախառնման կետում: Գետափնյա ընդարձակ հարթ մարգագետնի եզրին բարձրանում է միայնակ ժայռոտ բլուր, որի հարավային ու արևելյան ստորոտներում տարածվում է բնակատեղին: Բավական մեծ բնակատեղի է: Վտակի երկայնքով երկու-երեք միմյանց զուգահեռ շարքերով գնում են պատաշարեր, որոնք ընդհատվում են բլրի ստորոտում: Վերջիններս լայնությամբ երկշերտ, կողքի վրա ցից կանգնած՝ ուղղաձիգ ճակատային քարերով, ներսը քարահողային բուտով: Պատերը պահպանվել են հիմնականում, մեկ քարի բարձրությամբ: Նրանց ընթացքը ընդհատվում է հերկված հողատարածքներով: Բլրի գագաթը, ըստ ամենայնի, օգտագործվել է որպես դիտակետ, որտեղից գտնվել է միջնադարյան և բրոնզեդարյան խեցեղեն: Գագաթին պատերի հետքեր չեն պահպանվել, բայց կա կղմինդրի բեկոր, հավանաբար, փայտաշեն կառույցից մնացած: Բլրի ստորոտում, երկարաձիգ պատերի մոտից, հայտնաբերվել են քուր-արաքսյան ժամանակաշրջանի կավանոթի բերորներ:

Հուշարձանը վատ է պահպանվել: Խորհրդային տարիներին հուշարձանի տարածքում կազմակերպվել է անասնաֆերմա, և շրջակայքը, և պատաշարերի միջնամասը հերկվել է: Արդյունքում բնակավայրի արևմտյան մասը ոչնչացվել է, իսկ պահպանված պատաշարերը ամբողջական պատկեր չեն կազմում: Հուշարձանում հայտնաբերված վերգետնյա խեցեղենի վերլուծության հիման վրա, կարելի է եզրակացնել, որ բնակավայրը բազմաշերտ է և պարբերաբար բնակեցվել է սկսած վաղ բրոնզից մինչև միջնադար ընկած ժամանակներում:

Շահումյանի շրջան

գ. Զուար, Կալաբոինի տեղամաս

Ամրոց Կողոր



Կողորի տեղահանույթը և պարսպագիծը



Կողորի օրտոֆոտոպատկերը

8

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ
Անվանման աղբյուրը
Բաղադրամասերը՝
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրոց Կողոր
Կալաբոյուն, Բերդ
պատմական անվանումն է
պարսպաշար, մուտք, կացարաններ
9-14 ըդ դդ
-

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը
Շրջան

Բնակավայր

Բնակավայրի նախկին անվանումները

Աշխարհագրական կոորդինատները՝

Բարձրությունը ծովի մակերևույթից՝

Արցախի Հանրապետություն

Շահումյանի

գ. Զուար, Կալաբոյուն տեղամաս

Կալաբոյուն

N. 39 58 06,8 E. 46 15 35,9

2124 մ

Դիրքը բնակավայրի նկատմամբ՝	1,0 կմ հս-արե
Զրագրությունը՝	Թուրխունի և Զնի գետակի միջև
Ուղղիղ տեսողական կապը՝	-

Հնագիտական նկարագրություն


Գտնվում է Քարվաճառի և Քաշաթաղի շրջանների սահմանագլխի լեռնաշղթայի ջրբաժանին, Կողոր (Կալաբոյուն) գյուղից 1,0 կմ հյուսիս-արևելք, Թուրխուն գետի ձախակողմյան Կողոր (Կալաբոյունչայ) օժանդակի միջև վեր խոյացող բարձր լեռան գագաթին: Ամրոցը տեղադրված է ռազմավարական կարևոր կետում, հսկողության տակ առնելով Հյուսիսային Արցախը Հարավայինի հետ կապող, լեռնանցքով գնացող պատմական ճանապարհը:

Ամրոցանիստ լեռան գագաթը արևելյան, հարավային ու մասամբ արմտյան կողմից եզերվում է ուղղահայաց կտրվող անմատչելի ժայռերով և հասանելի է միայն հյուսիս-արևմտյան անկյունից խիստ զառիթափ լանջով: Լեռնագագաթը բարձր է, Կողոր գետակի նիշից՝ 400 մետրով: Ամրոցը տեղակայված է գագաթնամասի արհեստականորեն հարթեցված տափարակին: Հնարավորինս մատչելի՝ արևմտյան, մասամբ հյուսիսային ու հարավային կողմերից այն ամրացված է կանոնավոր շարված պարսպով, իսկ մյուս՝ անմատչելի կողմերից պարսպին փոխարինում է տափարակի եզրագծով գնացող ցից քարերից դրված, ցանկապատ հիշեցնող եզրագիծը: Պարիսպը շարված է ճեղքած, խորանարդի բերված, մեծ ու միջին չափի տեղական սպիտակ կրաքարից ամուր կրաշաղախով: Պարիսպը պահպանվել է հիմնականում 1-3 քար բարձրությամբ, բայց արևմտյան կողմի մի հատվածում այն կանգուն է մինչև 2,0-2,5 մ բարձրությամբ: Ամրոցի ներսի տարածքը խիտ կառուցապատված է եղել, ինչի մասին են վկայում բնորոշ փոսորակների տեսքով ուրվագծվող բազմաթիվ շինությունների հետքերը: Կենտրոնի բարձրադիր մասում մերկանում է կտրատված բնական ժայռագիծ, որը, ամենայն հավանականությամբ, ժամանակի շինարարներին որպես քարհանք էր ծառայում:

Ամրոցի գլխավոր մուտքը հյուսիս-արևմտյան անկյունում է: Այն մոտ 2,5 մ լայնությամբ անցում է, որը գնում է երկու հզոր, մոտ 5,0 x 8,0 մ չափերով, ուղղանկյուն, սնամեջ աշտարակների միջով: Մուտքից ներս բացվում է ընդարձակ հրապարակ: Գլխավոր դարպասներից դուրս եկող ճանապարհի սկզբնամասը շարված է եզրապատերով և սալապատ է: Հուշարձանի տարածքը պատված է խիտ խոտածածկույթով և այնտեղ վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել: Դատելով շինտեխնիկայից հուշարձանը կարելի է թվագրել զարգացած միջնադարով՝ 9-14 դդ դարերով:

գ. Ծար, Զիվել տեղամաս

Ամրացված բնակատեղի Զիվել 2



Զիվել 2 ի տեղահանույթը



Զիվել 2 ի օրտոֆոտոպատկերը

9.

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ
Անվանման աղբյուրը
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Ամրացված բնակատեղի Զիվել 2
-
մոտակա բնակավայրը
Ք.ա 2-1-ին հզ. - միջնադար
2020 թ

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը

Արցախի Հանրապետություն

Շրջան

Շահումյանի

Բնակավայր

Զիվել, Ծար համայնքի

Բնակավայրի նախկին անվանումները

Զիվել

Աշխարհագրական կոորդինատները՝

N. 39 58 45,7 E. 45 56 54,4

Բարձրությունը ծովի մակերևույթից՝

2107 մ

Դիրքը բնակավայրի նկատմամբ՝

0,3 կմ արևելք

Զրագրությունը՝

Թարթառի ձախ ափ, բնական աղբյուրների

մոտ

Ուղղիղ տեսողական կապը՝

-


Հնագիտական նկարագրություն

Գտնվում է Թարթար գետի վերին հոսանքի ձախ ափին, Ջերմաջուր ավանի հանդիպակաց լանջին, նախկին Զիվել գյուղից 0,3 կմ արևելք և մոտ 100 մ ցածր, կիրճի մեջ նստած հրվանդանին: Տեղանքը առատ աղբյուրների կողքին գտնվող համեմատաբար հարթ տափարակ է, որի ձորահայաց եզրին բարձրանում է ոչ մեծ ժայռոտ բլուր-միջնաբերդը: Բլրի գագաթի բնական ցից ժայռը վերցված է մեծ քարերով շարված կլորացող ցանկապատի մեջ, որից ներքև ուվագծվում է մի այլ ներփակ տարածք: Գագաթնամասը իր հերթին վերցված է բլրի ստորոտի ժայռագծով գնացող մի այլ քարե ցանկապատի մեջ: Բլրի հյուսիս-արևմտյան ստորոտի հարթակին երևում են կառուցապատման հետքեր: Նկատվում է, որ տարածքը իր ժամանակին եզերված է եղել պարիսպ-ցանկապատով, որի թույլ նշանները կարելի տարազատել: Ուշագրավ է կառուցապատված տարածքում մնացած երկու միանման կառուցվածքները՝ տեղում ընկած զանգվածեղ բնակտոր ժայռաբեկորները վերցված են կլոր պատաշարերի մեջ: Վերջիններս կրկնում են միջնաբերդի գագաթի կառուցվածքը, և ըստ ամենայնի, պատահական չեն: Ամրացված բնակատեղիի հարավային, ձորահայաց եզրին մնացել են երկու մեծ, խաշոր քարերով շարված, օղուզի տուն հիշեցնող, սենյակ-կացարաններ: Վաղ պատաշարերի նման խոշոր քարեր կան նաև միջնաբերդի ստորոտի պատերի մեջ:


Բնակատեղին վատ է պահպանվել: Տարածքը օգտագործվել է նաև միջնադարում, ինչի հետքերը նկատվում են պատաշարերում: Հուշարձանը պատված է խիտ խոտածածկույթով և այստեղ վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել:

Դատելով կառույցների տարատեսակ շինտեխնիկայից կարելի է ենթադրել, որ բնակատեղին գալիս է բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանից, իսկ ավելի ուշ՝ միջնադարում, այն մասամբ վերակառուցվել ու օգտագործվել է:

գ. Ծար, Ալ լճերի տարածք
Մեգալիթյան պարիսպներ



Մեգալիթյան պարսպի հատվածը տեղահանույթի վրա



Մեգալիթյան պարսպի օրտոֆոտոպատկերը

Հուշարձանի անվանումը՝
Այլ անվանումներ
Բաղադրամասերը՝
Թվագրությունը՝ (նախնական)
Հայտնաբերման տարեթիվը՝

Աշխարհագրական տվյալներ

Գտնվելու վայրը
Շրջան
Բնակավայր
Բնակավայրի նախկին անվանումները
Աշխարհագրական կորդինատները՝

Մեգալիթյան պարիսպներ

պարիսպներ, պատեր անցումներ

Ք.ա 2-1-ին հզ.

2015 թ

Արցախի Հանրապետություն

Շահումյանի

Ալ լճերի պետական պահուստային հողեր

Ալագյոլ

N. 40 01 02,6 E. 45 42 19,3

Բարձրությունը ծովի մակերևույթից՝
Զրագրությունը՝

2783 մ
Ալ լճերի տարածք

Հնագիտական նկարագրություն

Գտնվում են Շահումյանի շրանի Ալ լճեր ավայան մարգագետինների բարձրավանդակում: Պարսպների սկզբնակետը Մեծ Ալ լճի հյուսիս-արևելյան ծովախորշի ավին է: Այստեղից պարիսպները գնում են Ալ լճիերի հյուսիսային կողմով, Փորակ լեռան հարավ-արևմտյան լանջերի բնական քարացրոնների միջով /չինգիլներով/, քարացրոնների խոտածածկ մարգագետինների հետ հպման եզրագծով: Պարիսպը ընթանում է խոտածածկ դաշտավայրից 3-20 մ վերև ընկած նիշերով, քարացրոնների զանգվածի կորագծով, մոտ 7,0 կմ՝ հասնելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Աղբրաձոր և Գեղարք գյուղի հանդամասերը: Պարսպի 3,2 կմ ընթացքը գնում է Արցախի Հանրապետության տարածքով: Հիմնական պարսպագիծը չի փակվում: Այն շարված է քարացրոնների բնական, անմշակ քարերից, չոր /առանց շաղախի/ կոպիտ շարվածքով: Լայնությանը հիմնամասում 1,5-2,5 մ է, իսկ պահպանված բարձրությունը՝ մինչև 1,5 մ: Պարսպի շարի քարերը վերցված են անմիջապես պարսպի ներսի կողմից այնպես, որ պարսպագծի տակ, ներսում, քարացրոնների մեջ, առաջացել է երկարաձիգ ակոսատիպ խրամատ: Շարվածքի հնության մասին խոսում է պատաշարի մամռապատվածությունը և քարերի ճակատային երեսի այսպես կոչված՝ արևային այրվածքը՝ պատինան:

Ընթացքի տարբեր, միմյանցից զգալի հեռավորության վրա ընկած կետերում, հիմնական պարսպագծի ճակատից դեպի դուրս՝ խոտածածկ դաշտն են իջնում բազմաթիվ անցում-ճանապարհներ: Անցումները բացված են մարգագետի մոտ ընկած կետերում, իսկ այն դեպքերում, որտեղ պարսպագծը խոտածածկույթից զգալի բարձրության վրա է՝ կազմակերպված են թեքաղի ճանապարհների հենապատերով: Հիմնական պարսպին, ներսից՝ դեպի քարացրոնները նայող ճակատին կցված են բազմաթիվ այլ պատեր: Վերջիններս կազմում են կլորացող և բազմանկյուն մեծ ու փոքր սենյակներ, ճանապարհների ու մեծ բաց բակերի՝ անասնափարախների տպավորություն թողնող տարածքներ: Այս բոլորը կառուցվածքները քարացրոնների մեջ են և նրանց հատակը բնական, չհարթեցված քարացրոններն են: Ներսից կցված պատերը կառուցված են շատ ավելի անփույտ ու ցածր են և մեծ դժվարությամբ են ուրվագծվում: Համենայն դեպս, մեր ունեցած տեխնիկան չկարողացավ փաստագրել ներսի կառուցվածքները: Նրանք պետք է չափազրվեն տեղում, այլ եղանակով:


Մենք օդալուսանկարել ենք մեզալիթյան պարիսպների Մեծ Ալ լճի հյուսիսային կողմի ընդամենը 1,5 կմ հատվածը: Ակնհայտ է, որ պարիսպները կառուցվել ու

օգտագործվում էին որպես մեծաքանակ անասնահոտերի ամառանոցային ամենօրյա կայանատեղեր:

Հուշարձանի թվագրության հարցը բարդ է: Քարացրոնների մեջ հողաշերտ, ուստի և մշակութային շերտ, խեցեղեն, չկա: Բայց, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նման մեծածավալ շինարարական պրոեկտ կարող էր իրականացնել միայն վաղ պետականության մակարդակին գտնվող ինքնակազմակերպված հասարակությունը, կարելի է ենթադրել, որ մեզալիթյան պարիսպները կառուցվել է Ք.ա. 2-րդ հազարամյակի վերջին և 1-ին հազարամյակի առաջին կեսին՝ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հասարակության կողմից, որոնց հիմնական կենսակերպը՝ սեզոնային անասնապանությունն էր:

Այս բացառիկ, եզակի և արտակարգ ուշագրավ մեզալիթյան կառուցվածքները կարոտ են հատուկ, մանրակրկիթ, մասնագիտական ուսումնասիրության:

Հաղորդի շրջան
գ. Ջրաբերդ /Մուկրուդարա/ Ամրոց Բերդաքար



Բերդաքար ամրոցի հատակագիծը տեղահանության վրա



Բերդաքար ամրոցի օրտոֆոտոպատկերը

Հուշարձանի անվանումը՝	Ամրոց Բերդաքար
Այլ անվանումներ	Ղլեն քար, Կարմիր քար, Սանգյար
Անվանման աղբյուրը	Ժողովրդական անվանումը
Բաղադրամասերը՝	պարիսպներ
Թվագրությունը՝ (նախնական)	9-14 դդ
Հայտնաբերման տարեթիվը՝	-
Աշխարհագրական տվյալներ	
Գտնվելու վայրը	Արցախի Հանրապետություն
Շրջան	Հաղրութի
Բնակավայր	գ. Ջրաբերդ
Բնակավայրի նախկին անվանումները	Մուլքուդարա
Աշխարհագրական կորդինատները՝	N. 39 27 27,3 E. 46 54 19,5
Բարձրությունը ծովի մակերևույթից՝	1429 մ
Դիրքը բնակավայրի նկատմամբ՝	2.8 կմ հարավ-արևմուտք
Ջրագրությունը՝	ներկայումս անջրտի վայրում
Ուղղիղ տեսողական կապը՝	Ամրոցներ՝ Սարիկ, Թովմասաբերդ

Հնագիտական նկարագրություն

Գտնվում է գյուղից հարավ արևմուտք ընկած երկարաձիգ լեռան ամենաբարձր կետում: Տեղացիները այն Ղլեն քար են անվանում, բայց հիշատակվում է նաև Կարմիր քար և Սանգյառ անվանումներով: Ամրոցը տեղակայված է սրածայր լեռնաբազկի հարավահայաց՝ դեպի Արաքսի հովիտը նայող թեքաղի լանջին: Հատակագծում այն ունի արևելք-արևմուտք ձգվածությամբ նեղ (մոտ 50 մ) ու երկար (մոտ 400 մ) ուղղանկյան մոտեցող տեսք: Կառուցված է միջին ու մեծ չափերի ձեղքած, խորանարդի բերված, անմշակ քարերից՝ կրաշաղախով: Հիմնական պարսպագիծը գնում է լեռնաբազկի ջրբաժան ժայռագծով, որի ամենաբարձր կետում բացվում էր ամրոցի գլխավոր մուտքը: Այսօր մուտքը իրենից ներկայացնում է մի մեծ քարակույտ, որտեղ թույլ ուրվագծվում են դեմ դիմաց կանգնած երկու հզոր, ուղղանկյուն աշտարակների միջնամասով կազմակերպված նեղ անցումը: Մուտքից ներս նկատվում է հրապարակի նմանվող մի բաց, թեքաղի տարածք:

Համեմատաբար լավ պահպանված հիմնական պարսպագծի լայնությունն 2,5-3,0 մ է՝ բարձրությունը՝ մինչև 3,0 մ: Նրա արտաքին ճակատը տեղ տեղ ամրացված է աստիճանաձև ընդհատումներով, ուղղանկյուն աշտարակներով ու որմնահեծերով, իսկ ներքուստ պարսպագծին կցված են բազմաթիվ սենյակների

պատեր: Ներսում, տեղանքի խիստ թեքության հետևանքով՝ կցված սենյակներից պահպանվել են միայն պարսպին հարող հատվածները, բայց ակնհայտ է, որ պարսպի ներսի առնվազն արևելյան հատվածը կառուցապատված է եղել շղթայաձև տեղադրված զորոնոցատիպ կացարաններ: Ամրոցի ծայր արևելյան ու արևմտյան անկյուններում նկատվում են առանձնացված սենյակներ, որոնցից արևմտյանում՝ երևում են պարսպի զանգվածի մեջ բացված և աստիճաններով վեր բարձրացող, զնդան հիշեցնող երկու փոքր սենյակներ:

Ճիմնական պարսպից 30-50 մ հեռավորության վրա և 10-30 մ ցածր նստած նիշով գնում է ամրոցը հարավից փակող պարսպագիծը: Այն զգալիորեն ավելի նեղ է հիմնականից և նկատվում է հատվածաբար, իսկ արևելյան մասը՝ կործանված է հիմնահատակ: Վերջինիս կցված սենյակներ չկան, և նրա ավելի թույլ լինելը պայմանավորված է ամրոցանիստ ժայռի հարավային լանջի խիստ դժվարամատչելիությամբ:

Տեղադրման լինելով նախալեռնային գոտու ամենահարավային կետում, ամրոցը հարավից՝ Արաքսի հովտից, բուն Արցախին սպառնացող վտանգներից պաշտպանող նշանավոր ռազմական հենակետ էր եղել:

Ամրոցի ներսի տարածքը պատված է մերկացող ժայռերով, փլատակներով ու փարթամ խոտածածկույթով: Վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել: Դատելով ամրոցի կառույցների շինտեխնիկայից, այն կարելի է մոտավոր թվագրել 9-14 դդ դարերով:

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խումբը՝ Սահմանադրաիրավական բարեփոխումների արդի հիմնախնդիրները և խորհրդարանական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտահետազոտական ծրագրի շրջանակներում իրականացրել է համապարփակ ուսումնասիրություն Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ նաև՝ ՀՀ) տիրող սահմանադրաիրավական հիմնախնդիրներին խորհրդարանական կառավարման համակարգին անցման պայմաններում:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում 1995-2018թթ. ոչ միայն չեն հաղթահարվել նախորդ ժամանակների բացթողումներն ու պետության առջև ծառացած խնդիրները, այլև ծագել են նոր բնույթի հարցադրումներ, որոնք համակարգային լուծումներ և գիտական հիմնավորումներ են պահանջում: Վերջիններիս նպատակն է՝ ապահովվել հետհեղափոխական անցումային շրջանում կայուն սահմանադրական զարգացումներ, կայունությունն ու իրավահարաբերությունների սահմանադրականացումն՝ իրավակարգավորումների ոլորտում: Ակնհայտ է, որ արդի ժողովրդավարական, իրավական պետության զարգացման համար առանցքային նշանակություն ունի պետական իշխանության կազմակերպման այնպիսի կառուցակարգերի առկայությունը, որոնք լուրջ սահմանադրական երաշխիք կհանդիսանան պետական իշխանության գործառույթների մեկ իշխանության, մեկ ճյուղի ձեռքում կենտրոնացումից խուսափելու և դրանք պետական իշխանության տարբեր մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա իրականացնելու համար: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետև նաև՝ ՀՀ Սահմանադրություն) Հայաստանի Հանրապետությունը անցում կատարվեց

կառավարման կիսանախագահական ձևից խորհրդարանական ձևի, ինչը հանգեցրեց նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի անցման:

Սահմանադրական վերջին բարեփոխումները կատարվեցին 2015թ. դեկտեմբերի 6-ին, որի արդյունքում՝ ըստ էության, փոխվեց ամբողջ սահմանադրությունը, այդ թվում նույնիսկ փոփոխման ոչ ենթակա 114-րդ հոդվածը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ այդ փոփոխությունների արդյունքում, նախ և առաջ, ընդլայնվեց մարդու իրավունքների և ազատությունների շրջանակը: Հայտնի է, որ մարդու իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշպանության երաշխիքները հանդիսանում են արդի ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման և զարգացման կարևոր նախադրյալ: Մարդու իրավունքները հանդիսանում են բարդ սոցիալական, իրավական և քաղաքական նշանակություն ունեցող երևույթներ, որոնք տարբեր պատմական ժամանակաշրջաններում մեկնաբանվել են յուրովի: Հայտնի է, որ մարդու իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների ամբողջությունը կազմում են անձի իրավական դրության միջուկը: Անձի իրավական դրությունը նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս լրիվությամբ (նայած պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից) իր արտացոլումն է գտնում իրավունքի մեջ: Իր հերթին, մարդու իրավունքները հանդիսանում են նրան տրված հնարավորություն՝ սեփական հայեցողությամբ որոշելու իր վարքագծի չափը: Մյուս բոլոր անձինք, պետական մարմինները, կազմակերպությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այդ վարքագծին միջամտելուց: Միևնույն ժամանակ, առանց մարդկանց հիմնական իրավունքների և ազատությունների օրենսդրական ամրագրման խախտվում է «անձ-հասարակություն-պետություն» փոխհարաբերությունների կարևորագույն շղթան: Անձի իրավական դրության ձևավորման և զարգացման համար անկյունաքարային նշանակություն ունեն վերջինիս հիմնական իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների ամբողջության լիարժեք իրացումը տվյալ իրավական պետությունում: Այդ հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը կարևորվում է այն պատճառով, որ անհրաժեշտ է բացահայտել և սահմանել մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշպանման երաշխիքների՝ որպես արդի ժողովրդավարական պետության կյանքում անձի իրավական դերն ամրապնդող, կարևորագույն գործոնի առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական, սահմանդրաիրավական բարեփոխումներն իրենց ուրույն ազդեցությունն են թողնում պետության

կողմից մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության կառուցակարգերի կիրառման առանձնահատկությունների վրա:

Անձի տեղն ու դերը հասարակության և պետություն մեջ ճիշտ ընկալելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է պարզել վերջինիս հասարակական դիրքը, ինչպիսի դիրք է նա զբաղեցնում հասարակության արտադրության և բարիքների բաշխման մեջ, հասարակություն-պետություն փոխհարաբերության շղթայում, ինչպես նաև հասարակական կյանքի այլ ոլորտներում: Հայտնի է, որ պետությունն իրավունքի միջոցով ամրագրվում է մարդկանց հասարակական, այսինքն՝ փաստացի վիճակը, իրավական դրության, իրավական կարգավիճակի ձևով³:

Համամիտ ենք իրավաբանական գրականությունում արտահայտած այն մտքի հետ, որ պետության և իրավունքի տեսության կառուցվածքում անձի իրավական դրությունը հանդիսանում է համախմբող, կարծրացնող հասկացություն, որը միահյուսում և համակարգում է «անձ-հասարակություն-պետություն» փոխհարաբերությունները: Միևնույն ժամանակ, անձի իրավական դրությունը խարսխված է պետության և իրավունք տեսության և պատմության վրա, և ներառում է անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի, սոցիալական, իրավական հատկանիշների ուսումնասիրությունը, իրավական դրության ծագման և զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև էվոլյուցիոն զարգացման հեռանկարը և այլ հիմնահարցեր⁴:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ անձի իրավական դրությունը նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս լրիվությամբ (նայած պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից) իր արտացոլումն է գտնում իրավունքի մեջ⁵:

Հայտնի է, որ ժողովրդավարական, իրավական, պետությունը մարդկային համակեցության այնպիսի ձև է, որտեղ առկա են մարդկային փոխհամաձայնեցված հարաբերություններ, որտեղ պետությունն ու հասարակությունը ստանձնում է կարիքավորներին օգնելու, նյութական բարիքների վերաբաշխման վրա ներգործելու փոխադարձ պարտավորություն՝ ելնելով արդարության այնպիսի սկզբունքներից, որ յուրաքանչյուրի համար ստեղծված լինեն արժանավայել կյանքի երաշխիքներ,

³Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանդրական իրավունք/ Պատ. խմբ., **Այվազյան Ն.Ա.**, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 196:

⁴Տե՛ս **Ղազանչյան Լ.Ա.**, Անձի իրավական դրություն. Տեսական-իրավական վերլուծություն. Եր., 2016. Լիմուշ, էջ 15:

⁵Տե՛ս **Այվազյան Վ.Ն.** Մարդու իրավունքներ, 2-րդ լրամշակված հրատարակ., Եր. Տիգրան Մեծ, 2007, էջ 43: **Ղազանչյան Լ.Ա.**, նշված աշխ., էջ 15-16; **Малько В.В.** Понятие правового статуса личности в СССР// Управление и право. 1978. Вып. 4. Ч. 1. С. 58-62; **Недбайло П.Е.** Основы теории государства и права. Киев, 1959; **Общая теория прав человека/** Отв. ред. **Е.А. Лукашева.** М., Норма. 1996; **Парфенов А.В.** Правовое состояние. Дисс ... канд. юрид. наук. Н.Новгород. 2002.

ինչպես նաև պաշտպանվեն իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: **Հեղևաբար, անձի իրավական դրության ձևավորման և զարգացման համար անկյունաքարային նշանակություն ունեն վերջինիս հիմնական իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների ամբողջության լիարժեք իրացումը տվյալ իրավական պետությունում:**

Համամիտ ենք Ա.Հ. Երիցյանի այն կարծիքի հետ, որ մարդու սահմանադրական իրավունքները և ազատությունները հիմնարար և ամենաէականն են, որոնք արտահայտում են ազատության բնական վիճակը և օժտված են բարձրագույն իրավաբանական պաշտպանությամբ⁶:

Ինչպես իրավագիտորեն նշում է Լ.Ա. Ղազանչյանը. «Անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների, ինչպես նաև դրանց պաշտպանության երաշխիքների համակարգի հիմքում դրված է հիմնարար արժեհամակարգային սկզբունք, համաձայն որի՝ ՀՀ-ում մարդը բարձրագույն արժեք է: Ավելին՝ մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Անձի իրավական կարգավիճակը, ընդգրկում է օրենքով ամրագրված անձի իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի համակցությունը, որն, իր հերթին, հանդիսանում է անձի սոցիալական կարգավիճակը (դրությունը) կարգավորող իրավաբանական կարգավորման միջոց»⁷:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունում անձի իրավունքները և ազատություններն իրենց բովանդակությամբ կարծրացած և մշտնջենական հասկացություններ չեն, այլ անընդհատ փոփոխվում և զարգանում են: Դրանք չեն շնորհվում պետության կողմից, քանի որ գոյություն ունեն հասարակական փոխհարաբերությունների համակարգից բխող անձի սոցիալական հնարավորությունների ուժով: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է անձի իրավունքները դիտարկել, հիմնվելով տվյալ հասարակությունում և պետությունում տիրող հասարակական, սոցիալական պայմանների և դրանց հիման վրա կառուցված իրավական նորմերի համակցության վրա, քանի որ Սահմանադրությունում և օրենքներում ամրագրված սոցիալական հնարավորությունները անձի համար դառնում են պետության պաշտպանության, երաշխավորման ենթակա իրավաբանական պահանջներ:

⁶Տե՛ս Երիցյան Ա.Հ., Մարդու իրավունքներ. Պամատեսական, իրավափիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրները, Եր., Հեղ.իրատ., 2011, էջ 237-238:

⁷ Ղազանչյան Լ.Ա., նշված աշխտ. էջ 120:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անձի սոցիալական հնարավորությունները հանդիսանում են սոցիալական նախադրյալներ նրա իրավաբանական իրավունքների, ազատությունների, ինչպես նաև պարտականությունների իրական բովանդակության ձևավորման, զարգացման օրինաչափությունների և դրանց հիմքում ընկած բարիքներից օգտվելու հնարավորության համար: Ուստի, անձի իրավաբանական իրավունքներն ու ազատությունները ձեռք են բերում հստակ սահմաններ, պետության կողմից նորմատիվ-իրավական կարգավորման իրականացման հետևանքով, իսկ անձի կողմից այդ սահմանների խախտումը դիտարկվում է որպես ոչ իրավաչափ վարք: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարող ենք փաստել, որ խորհրդային իրավագետներից շատերը, հիմք ընդունելով անձի իրավունքների բովանդակությունում՝ նյութական և սոցիալական հիմնարար սկզբունքները, տարանջատել են մարդու իրավունքները քաղաքացու իրավունքներից⁸:

Իրավաբանական գրականությունում մարդու իրավունքները սահմանվում են որպես նրան տրված հնարավորությունն է՝ սեփական հայեցողությամբ որոշելու իր վարքագծի չափը: Մյուս բոլոր անձինք, պետական մարմինները, կազմակերպությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այդ վարքագծին միջամտելուց⁹:

Ժամանակակից աշխարհում ձևավորվել է անձի համընդհանուր իրավունքների կատեգորիան մարդկանց համընդհանուր հավասարության համատեքստում, որը համաշխարհային հանրության համար ունի միասնական, ընդհանուր-իրավական իմաստ: Մարդու իրավունքներն ու ազատությունները դադարել են լինել պետության ներքին քաղաքականության և պրակտիկայի օբյեկտ, այլ դարձել են ողջ միջազգային հանրության խնդիրը: Հետևաբար, անձի իրավունքների և ազատությունների ծավալը որոշվում է ոչ միայն այս կամ այն հասարակության կոնկրետ առանձնահատկություններով, այլև ողջ մարդկության քաղաքակրթություն զարգացմամբ, ինչպես նաև տվյալ պետության միջազգային հանրությանն ինտեգրման աստիճանով և մակարդակով¹⁰: Հետաքրքրություն է առաջացնում իրավագիտությունում արտահայտած այն կարծիքի հետ, որ իրավունքի գլոբալիզացիայի գործընթացը չի կարող հանդիսանալ մարդու իրավունքների գլոբալացման հիմք, քանի որ պետք է հարգել յուրաքանչյուր ազգի իր

⁸ Մանրամասն տե՛ս **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. М., Норма. 2008.

⁹ Տե՛ս **Այվազյան Վ.Ն.** Մարդու իրավունքներ. 2-րդ լրամշակված հրատարակ., Եր. Տիգրան Մեծ, 2007, էջ 12; **Ղազանջյան Լ.Ա.**, Անձի իրավական դրության հիմնախնդիրները ժողովրդավարական, իրավական պետությունում (տեսական-իրավական վերլուծություն), Եր., Լիմուշ, 2015, էջ. 161-162:

¹⁰ Մանրամասն տե՛ս **Ղազանջյան Լ.Ա.**, նշված աշխ.;

ավանդույթների, լեզվի և այլ բնութագրիչ հատկանիշների պահպանման իրավունքը¹¹: Միևնույն ժամանակ, այդ տեսակետի ընդդիմադիրները գտնում են, որ գլոբալիզացիայի շնորհիվ կարելի է հասնել իրավագիտության ցանկալի նպատակի՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հավասարեցմանը¹²:

Ակնհայտ է, որ գոյություն ունեն նույնիսկ հիմնավոր տարբերություններ միջազգային-իրավական և տարածաշրջանային ակտերում հռչակված սկզբունքների և իրականության միջև: Օրինակ՝ իսլամական երկրներում կանանց կարգավիճակը, Հետևաբար, առաջընթացն իրականանում է ցանկացած մշակութային քաղաքակրթության պայմաններում, անձի իրավունքների հիմնարար սկզբունքների ընկալման և իրացման աստիճանական մերձեցման գործընթացում, որին, բնականաբար նպաստում են՝ գլոբալացման տնտեսական և կյանքի այլ ոլորտներում, ներգաղթը, մշակութային արժեքների փոխանակումը, գլոբալ խնդիրների լուծումը՝ կապված թմրամիջոցների շրջանառության և միջազգային ահաբեկչության, բնական և տեխնոգեն աղետների դեմ պայքարի հետ:

Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ուսումնասիրության շրջանակներում կարևորվում է դրանց օրենսդրական ամրագրման առանձնահատկություններին, մասնավորապես՝ այն փաստին, որ հասարակության, պետության համար առավել կենսական նշանակություն ունեցող իրավունքներն են կոչվում «հիմնական» և ամրագրվում են Սահմանադրությունում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» օրենսդիրն ամրագրել է ՀՀ տարածքում բնակվող անձանց մի շարք հիմնական իրավունքներ և ազատություններ, որոնցից են՝ կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության, սեփականության, դատական պաշտպանության և այլ իրավունքներ: Միևնույն ժամանակ, օրենսդիրն անձի իրավունքների և ազատությունների զգալի մասը ամրագրել է ընթացիկ օրենսդրությունում, քանի որ թեև դրանք իրենց բովանդակությամբ չեն համարվում հիմնական, սակայն լրացնում և հստակեցնում են սահմանադրական իրավունքները:

Հարկ է նշել, որ 2015թ. Սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոփոխված ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածն ամրագրում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում

¹¹Մանրամասն տե՛ս **Ղազանջյան Լ.Ա.** նշված աշխ.:**Карташкин В.А.** Права человека: международная защита в условиях глобализации. М.,Норма. 2009; Права человека: итоги века, тенденции, перспективы /Под.общ.ред. **Е.А. Лукашевой.**М., 2002; **Holman F.E.** The Greatest on Our American Heritage//Vital Speeches of the Day, 15 december, 1958; **Hunt A.,** Explorations in Law and Society: Towards a Constitutive Theory of Law, New York/London, Routledge, 1993:

¹²Մանրամասն տե՛ս **Зоркин В.Д.** Право в условиях глобальных перемен.М.,2015; **Марченко М.Н.** Государство и право в условиях глобализации и теория.М., 2015.

ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»¹³:

Ինչպես իրավագիտորեն նշում է Ա.Հ. Երիցյանը՝ սահմանադրական և ճյուղային իրավունքների այս երկու խմբերի հարաբերակցությունը կայանում է նրանում, որ հիմնական իրավունքները, կանխորոշում են ոչ միայն կոնկրետ իրավունքի, այլև մարդու իրավունքների ողջ համակարգի բովանդակությունը և գլխավոր դերը: Ա. Հ. Երիցյանը նաև նշում է, որ հիմնական են համարվում մարդու այնպիսի իրավունքները, որոնք հանդիսանում են անհրաժեշտ նախադրյալներ ապահովելու համար¹⁴:

- 1) մարդու արժանապատիվ և ազատ գոյությունը,
- 2) իր ապրած հասարակության կառուցվածքի ու կառավարման հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությունը,
- 3) տնտեսական և սոցիալական այն պայմանները, որոնք անհրաժեշտ են նրան կենսականորեն կարևոր նյութական ու հոգևոր պահանջմունքները բավարարելու համար,
- 4) ազատության մի ոլորտ, որտեղ սահմանափակված են պետական միջամտությունն ու վերահսկումը:

Հիմնական իրավունքները այն իրավունքներն են, որոնք պատկանում են ոչ թե մարդկանց որոշակի շրջանակին, այլ յուրաքանչյուր մարդու: Հետևաբար, այն իրավագետների կարծիքի հետ, որոնք գտնում են, որ հիմնական իրավունքները ոչ միայն սահմանադրական, այլև սուբյեկտիվ իրավունքներ են և պատկանում են յուրաքանչյուրին: Ավելին, սուբյեկտիվ իրավունքները, ինչպես և պարտականությունները, հանդիսանում են տարբեր շահերի և պահանջմունքների բավարարման իրավաբանական միջոցներ, որոնք հնարավորություն են ընձեռում օգտվելու որոշակի սոցիալական բարիքներից¹⁵: Հետևաբար, սուբյեկտիվ իրավունքը անձի սոցիալապես պայմանավորված և երաշխավորված հնարավոր վարքագծի չափն է,

¹³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2017), հոդվ. 81; <http://www.president.am/hy/constitution-2015/>,/10.09.2020/:

¹⁴ Տե՛ս **Երիցյան Ա.Հ.**, Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում, Եր., 2007, էջ 30:

¹⁵ Козлова Е. И. Конституционные права и свободы человека и гражданина// Государственное право Российской Федерации, М., 1996. С. 208.

որը սահմանված է օբյեկտիվ իրավունքի նորմերով (սահմանադրություն, օրենքներ), նյութական, հոգևոր և անձնական բարիքներից օգտվելու նպատակով, սեփական պահանջների և շահերի բավարարման համար:

Ուշադրության է արժանի նաև ՀՀ Սահմանդական բարեփոխման արդյունքում սեփականության իրավունքի ընդլայնումը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է սեփականության իրավունքը, այլև ամրագրում է նախորդ փոփոխություններում դեռևս տեղ չգտած դրույթներ: Այսպես, 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Նշված հոդվածի 5-րդ մասն ամրագրում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

Հատկանշական է, որ սահմանդրական բարեփոխումների արդյունքում լիարժեքորեն ամրագրվել է **իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորվածությունը**:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխիքը հանդիսանում է ոչ միայն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական, այլև միջազգային իրավական միջոց:

Հայտնի է, որ իրավաբանական գրականությունում անձի իրավաբանական օգնություն ստանալու երաշխիքը քննարկվում է 2 տեսանկյունից: Իրավագետներից ոմանք գտնում են ,որ վերոնշյալ սահմանադրական երաշխիքը անհարժեշտ է դիտարկել **լայն իմաստով**, նրանում ընդգրկելով պետական և մասնավոր հատվածի իրավաբանական ծառայությունները, իրավաբանական խորհրդատվությունը, ինչպես նաև քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում իրականացվող փաստաբանական ծառայությունը:

Մյուս տեսակետի կողմնակիցները իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը պետք է երաշխավորվի և իրացվի **նեղ իմաստով**: Տվյալ դեպքում նրանք իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի տակ հասկանում են քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում իրականացվող փաստաբանական գործունեություն: Այսինք՝ յուրաքանչյուր անձ, ով մասնագիտական իրավաբանական օգնության կարիք ունի կարող է դիմել փաստաբանի և ստանալ համապատասխան օգնություն:

Հարկ է նշել, որ 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ՀՀ Սահմանադրությունն առանձին հոդվածի տեսքով սահմանվեց անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: ՀՀ Սահմանադրության 64-րդ

հողվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»¹⁶:

Հայտնի է, որ փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար¹⁷: Իր հերթին, փաստաբանական գործունեություն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով¹⁸:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն, փաստաբանն իրավունք ունի փոխհատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց: Վերջինիս գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով: Միևնույն ժամանակ, օրենքը թույլատրում է փաստաբանին ցույց տալ իրավաբանական օգնություն նաև անհատույց: Դատարանների կողմից դատական ծախսերի (վնասների) հատուցման հետ կապված փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը որոշելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդը կարող է սահմանել փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակ: Նշված գնացուցակը չի կարող օգտագործվել այլ նպատակով¹⁹:

Ինչ վերաբերում է պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնությունը, ապա վերոնշյալ օրենքի 41-րդ հոդվածում

¹⁶ՀՀ Սահմանդրություն (փոփոխ. 27.11.2005թ.), հոդվ. 64, <http://www.president.am/hy/constitution-2005/./10.09.2020/>:

¹⁷ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին» հոդվ. 17 <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=48764/./10.09.2020/>:

¹⁸ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին» հոդվ. 5, http://www.arlis.am/Document_View.aspx?docid=48764/./10.09.2020/:

¹⁹ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին» հոդվ. 6, http://www.arlis.am/Document_View.aspx?docid=48764/./10.09.2020/:

սահմանված են այն դեպքերն ու կարգը, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Այսպես, հանրային պաշտպանություն է համարվում վերոնշյալ հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը: Քրեական գործերով անվճար իրավաբանական օգնությունն իրականացվում է վարույթն իրականացվող մարմնի որոշման հիման վրա Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից հանրային պաշտպանի նշանակման միջոցով: Քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով՝ անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է քաղաքացիների դիմումների հիման վրա Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար կողմից օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող հանրային պաշտպանը փաստաբան է, որը գործում է գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա: Հանրային պաշտպանը վարձատրվում է պետական բյուջեից օրենքով սահմանված չափով և կարգով²⁰:

Կարծում ենք, որ Հանրային պաշտպանի գրասենյակի առկայությունը, ինչպես նաև Փաստաբանական պալատի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական խորհրդատվությունը աջակցում է սոցիալական վատ վիճակում գտնվող անձանց իրենց իրավունքների պաշտպանության գործընթացում, քանի որ ոչ բոլոր քաղաքացիներն են քաջաձանթո ՀՀ դատավարական իրավունքի սկզբունքներին ու նորմերին և չեն կարող ինքնուրույն պաշտպանել իրենց իրավունքները: Ավելին, ոչ միշտ է, որ հանցագործության մեջ կասկածվող անձի ձերբակալումն արդարացի, և քննչական մարմինների գործողությունները այդպիսի իրավիճակներում կարող են խախտել մարդու իրավունքները և ազատությունները: Կարծում ենք, փաստաբանի մասնակցությունը քրեական վարույթում կարող է էապես նպաստել գործի հանգամանքների բացահայտմանը, քննչական գործողությունների իրականացմանը՝ օրենքին համապատասխան, ինչպես նաև անձի անմեղության ապացուցմանը: Հարկ է նշել, որ փաստաբանի իրավունքներն ու գործողության շրջանակները մանրամասն ներկայցված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Միևնույն ժամանակ, կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ ՄԻԵԴ) կարևորվում է պառլամենտական համակարգում անձի իրավական դրության դրսևորման առանձնահատկությունների իրականացումը, ինչպես նաև պետության

²⁰Մանրամասն տե՛ս Հանրային պաշտպանի գրասենյան, <http://www.advocates.am/about-us/./07.08.2020/>:

հայեցողության սահմանների հստակեցումը, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ-ին միջազգային արյաններում հանդես գալ առավել շահավետ կարգավիճակում:

Երկորդ կարևոր առանձնահատկություն, որն իհայտ է եկել պառլամենտական կառավարման համակարգ ուսումնասիրելիս, այն է, որ սահմանդրական փոփոխությունների արդյունքում՝ կիսանախագահական (ավելի ճիշտ՝ սուպերնախագահական) կառավարման համակարգը փոխարինվեց «սուպերվարչապետական» կառավարման համակարգի, այսինքն՝ գումարելիների տեղերի փոփոխությունը չի հանգեցնում ընդհանուր գումարի փոփոխությանը: Գտնում ենք, որ անհրաժեշտ է հետևողական անցում կատարել ցանկացած իշխանակենտրոն (սուպերնախագահական, սուպերվարչապետական) սահմանադրական լուծումների համակարգից մարդակենտրոն (անձնակենտրոն) համակարգի, ինչը հանդիսանում է անցում դեպի իրական պառլամենտական կառավարման ձևի և պառլամենտարիզմի արժեքների հաստատման, ինչը, մեր կարծիքով չհաջողվեց լիարժեք իրականացնել նաև 2015թ. -ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Ինչ վերաբերում է պառլամենտական կառավարման համակարգին, ապա կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգում ենք այն պարզ եզրակացության, որ խորհրդարանի պառլամենտական բնույթը անմիջականորեն կապված է պառլամենտարիզմ հասկացության հետ: Ընդ որում, «պառլամենտ» (խորհրդարան) և «պառլամենտարիզմ» հասկացությունները փոխկապակցված են:

Խորհրդարանը համապետական բարձրագույն օրենսդիր և ներկայացուցչական մարմին է, որի հիմնական գործառույթն իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանության իրականացումն է: Որպես կանոն, խորհրդարանն իրականացնում է հետևյալ իրավասությունները՝

1. օրենսդրական նախաձեռնություն,
2. ֆինանսական իրավասություն,
3. միջազգային պայմանագրերը վավերացնելու (ռատիֆիկացիա) ու չեղյալ հայտարարելու (դենոնսացիան) իրավասություն,
4. հանրաքվե նշանակելու իրավասություն,
5. պետական մարմինների ձևավորման, պաշտոնատար անձանց նշանակման, ընտրության կամ այդ գործընթացին մասնակցելու իրավասություն,
6. պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ վերահսկողության իրավասություն,
7. պաշտպանության և անվտանգության բնագավառում իրավասություն:

Պառլամենտը, որպես պետաիրավական ինստիտուտ օժտված է պառլամենտական և ներկայացուցչական բնույթով: **Ներկայացուցչական բնույթը**

կապված է ժողովրդի կողմից ընտրությունների միջոցով համապատասխան մանդատ ստանալու և ընտրողների կամքն ու շահերը ներկայացնելու հետ: Իրական ներկայացուցչական մարմին դառնալու հիմնական նախապայմանը օրինական ընտրությունների անցկացումն է: **Խորհրդարանի պառլամենտական բնույթը** անմիջականորեն կապված է պառլամենտարիզմ հասկացության հետ: *Ընդ որում, «պառլամենտ» և «պառլամենտարիզմ» հասկացությունները փոխկապակցված են²¹:*

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ **պառլամենտարիզմը** կարող է դիտարկվել որպես պետական իշխանությունների կազմակերպման համակարգ, որը նախատեսում է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի գոյությունը, օժտված է օրենսդիր և վերահսկման լիազորություններով, հիմնված է պետական իշխանության ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական) տարանջատման սկզբունքի վրա, որոնցից յուրաքանչյուրն անկախ է և ինքնուրույն է իրականացնելու իրենց սահմանադրական լիազորությունները²²: Միևնույն ժամանակ, իրավական պետության ձևավորումն անհնար է առանց ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան, մարդու բնական իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների իրավահավասարությունը երաշխավորող և ներքին հակասություններից զերծ օրենսդրության: Իրավաստեղծ գործունեությունը գիտականորեն հիմնավորված ստեղծագործական ընթացակարգ է, որն իրականացնում են պետական մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում և այն կոչված է բավարարելու հասարակության ու պետության իրավական պահանջմունքները:

Հայտնի է, որ ՀՀ-ում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: ՀՀ Սահմանադրության (փոփոխ. 06.12.2015թ.) 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից: Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու

²¹ Տե՛ս Կոստանյան Գ., Ղազանջյան Լ., Պառլամենտական իրավունքի հմունքները Հայաստանի Հանրապետությունում, Ուսումնամեթոդական ձեռն., Երևան, 2019, էջ 19:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 20:

սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

Ընդհանուր առմամբ, իրավաբանական գրականությունում «խորհրդարանի կառուցվածք» հասկացությունն ընդգրկումն է կոնկրետ անձանց, մարմինների, կառույցների կամ ստորաբաժանումների ամբողջությունը, որոնք կազմում են պետության խորհրդարանը: Ուշագրավ է, որ նախկինում խորհրդարանները հիմնականում եղել են միապալատ, իսկ ներկայից ժողովրդավարական պետությունների գերակշիռ մասն ունի երկպալատ պառլամենտ: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է տվյալ պետության քաղաքական ռեժիմով, տարածքային կառավարման ձևով և այլ հատկանիշներով: Այսպես, դաշնային պետություններում խորհրդարաններն ունեն երկպալատ համակարգ, որի վերին պալատը ներկայացնում է դաշնության սուբյեկտների շահերը (ԱՄՆ, Գերմանիա, Մեքսիկա, Ավստրալիա), իսկ ունիտար պետություններին բնորոշ են միապալատ խորհրդարանները (Դանիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Բուլղարիա, Կիպրոս): Այնուամենայնիվ, գոյություն ունեն բազմաթիվ ունիտար պետություններ, որտեղ գործում է երկպալատ խորհրդարանի մոդելը (Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Լեհաստան, Ճապոնիա): Եվրոպական մի շարք պետություններում խորհրդարանը միապալատ է (Ֆինլանդիա, Դանիա, Շվեդիա, Հունգարիա, Բուլղարիա): Ընդ որում, գոյություն ունի երկպալատ համակարգերի 2 տեսակ: Մի դեպքում գործում է թույլ վերին պալատ, որը կարող է պարզապես կասեցնել ստորին պալատի ընդունած ակտերը (կամ օրենսդրական գործընթացը), բայց ոչ վերացնել դրանք: Երկրորդ դեպքում գործում է ուժեղ վերին պալատ, առանց որի թույլտվության ստորին պալատի ընդունած ակտը չի կարող կյանքի կոչվել²³:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում խորհրդարանական կառավարման մոդելի շրջանակներում կտրուկ նվազել են Հանրապետության նախագահի գործառույթները, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում իշխանությունների տարանջատման սկզբունքի լիարժեք իրականացման վրա: Հայտնի է, որ ՀՀ Սահմանադրության «Օրենքի ստորագրումը և հրապարակումը» խորագրով հոդված 129 համաձայն, Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահն ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում

²³ Տե՛ս Կոստանյան Գ., Ղազանջյան Լ., նշված աշխտ., էջ 22:

ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը²⁴: Միևնույն ժամանակ, նախկինում, ՀՀ Սահմանադրության (փոփոխ. 27.11.2005թ.) 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՀՀ Նախագահը, Ազգային ժողովի ընդունած օրենքը ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Դրա հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին իրավունք էր վերապահում նշված ժամկետում օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով պահանջելով նոր քննարկում: Այդ պարագայում, Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում էր արտահերթ, իսկ Հանրապետության Նախագահի առարկությունները և առաջարկությունները չընդունելու դեպքում, Ազգային ժողովը վերադարձրած օրենքը վերստին ընդունում էր պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ակնհայտ է, որ 2015թ. -ի սահմանադրական փոփոխություններով ՀՀ Նախագահի վերոյի իրավունքը փոխարինվել է ոչ լիարժեք կամ քվադի-վերոյի իրավունքով, ինչը մի շարք հարցեր և նոր խնդիրներ է առաջացնում օրենքի սանկցիավորման և լեգիտիմության ապահովման գործընթացում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ օրենքի սանկցիավորման համար որոշ դեպքերում անհրաժեշտ է ոչ միայն պետության նախագահի, այլև բարձրաստիճան այլ պաշտոնյայի ստորագրությունը: Այսպես, Սլովակիայում Ազգային խորհրդի կողմից ընդունված օրենքը ստորագրվում է Ազգային խորհրդի նախագահի, Կառավարության Նախագահի և պետության Նախագահի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում գիտական խմբի ուշադրության կիզակետում են գտնվել նաև խնդիրներ կապված պատգամավորի իրավական կարգավիճակի, վերջինիս իրավական և սոցիալական երաշխիքների հետ:

Պատգամավոր բառը ծագում է լատիներեն «deputatus» բառից, որը նշանակում է «լիազորված», «հուղարկված»: Պատգամավորը պետական կամ տեղական ինքնակառավարման օրենսդիր կամ այլ ներկայացուցչական մարմնում ընտրված անձ է, այդ մարմնում բնակչության որոշակի մասի ներկայացուցիչ՝ իր շրջանի ընտրողների կամ ողջ ազգի: Սովորաբար պատգամավոր անվանում են միապալատ և երկապալատ խորհրդարանների ստորին պալատի, շրջանային և տեղական

²⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխ. 27.11.2005թ.), հոդվ. 64, <http://www.president.am/hy/constitution-2005/,/10.09.2020/>:

ներկայացուցչական մարմինների անդամներին²⁵:

Հայտնի է, որ կարգավիճակ բառը ծագում է լատիներեն «status» բառից, որը նշանակում է «դիրք», «վիճակ»²⁶:

Հարկ է, նշել, որ իրավագետների մի մասը նույնացնում է «կարգավիճակ» և «իրավական կարգավիճակ» հասկացությունները, իսկ մասը՝ տարբերակում դրանք:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ կարգավիճակը տեսական կառուցվածք է, որը միավորում է նորմատիվ բնութագրերը, տեսական հասկացությունները և իրավաբանական հաստատությունների իրականացման պրակտիկան: Այսպիսով, պատգամավորի կարգավիճակը պետք է ընկալվի որպես համապատասխան երաշխիքներով նախատեսված իրավական և այլ սոցիալական նորմերով որոշված պատգամավորի փաստացի դիրքը հասարակությունում:

Այս դեպքում մենք խոսում ենք ոչ միայն իրավական կարգավիճակի մասին, այլև պատգամավորի փաստացի կարգավիճակի մասին, որը կարգավորվում է իրավական նորմերով և կոնկրետ սոցիալ-քաղաքական պայմաններով:

Իրավաբանական գրականությունում Օ. Օ. Միրոնովը գտնում է, որ պատգամավորի կարգավիճակը նրա իրավունքներն ու պարտականություններն են, ինչպես նաև պատգամավորության գործունեության երաշխիքները²⁷: Ըստ Ի.Պ. Օկուլիչի պատգամավորի իրավական կարգավիճակի անքակտելի տարրերը ոչ միայն նրա իրավունքների, պարտականությունների և գործունեության երաշխիքներն են, այլև նրա լիազորություններն ու պարտականությունները²⁸: Իր հերթին, Ա.Վ. Զինովյևը, խոսելով պատգամավորի իրավական կարգավիճակի մասին, բացահայտում է այդ կարգավիճակից բխող մի քանի տարրեր՝ պատգամավորի հրամայական մանդատը, ժողովրդական պատգամավորների գործառույթները, իրավունքները և պարտականությունները, պատգամավորական գործունեության երաշխիքները²⁹:

Վերոնշյալի հիման վրա, հարկ ենք համարում ընդգծել պատգամավորի կարգավիճակի հետևյալ տարրերը՝ պատգամավորի մանդատը, պատգամավորի իրավասությունը (պատգամավորների գործառույթների իրականացման ընթաց-

²⁵Տե՛ս Национальная юридическая энциклопедия, <http://determiner.ru/termin/deputat.html/18.03.2018/>:

²⁶Баглай М.В., Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, էջ 465:

²⁷Տե՛ս Миронов О.О. Статус депутата российской парламента // Вестник Саратовской государственной академии права. 1995. № 2. С. 4.

²⁸Տե՛ս Окулич И.П. Проблемы правового статуса депутата законодательного (представительного) органа государственной власти субъекта Российской Федерации. Челябинск, Околица, 2003. С. 29

²⁹Տե՛ս Зиновьев А.В. Конституционное право России: Проблемы теории и практики. М. Герда. 2000. С. 183.

քում պատգամավորի իրավունքներն ու պարտականությունները), պատգամավորական գործունեության երաշխիքները:

2015թ. ընդունված ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովի պատգամավորը օժտված է ներկայացուցչական մանդատով և ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով: Սահմանադրության մեջ չի նշվում ու չի տալիս պատգամավորի մանդատի հասկացությունը, կարծում ենք ճիշտ կլինի, որ Սահմանադրության մեջ նշվի պատգամավորի մանդատի բովանդակությունը, քանզի այն տարբեր մեկնաբանությունների տեղիք կարող է տալ, հատկապես ներկայումս, երբ պատգամավորի մանդատի տարրերի և հատկանիշների հարցում միասնական մոտեցում չկա³⁰: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ պատգամավորն օժտված է ներկայացուցչական մանդատով և ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով: Ոչ մի պատգամավոր ազատ մանդատի պարագայում իրավաբանորեն ստիպված չէ որոշակի վարքագիծ դրսևորել խորհրդարանում: Սակայն պետք է նշել, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ գրեթե բոլոր երկրներում մեծամասնական համակարգով պատգամավորության թեկնածուի ընտրվելու հնարավորությունը շատ քիչ է, եթե նրա նախընտրական ծրագիրը չի պաշտպանվում որևէ կուսակցության կողմից: Այսինքն, որոշ առումով պատգամավորի համար իր և քաղաքական կուսակցության միջև հարաբերությունները հաճախ ավելի կարևոր են, քան հարաբերություններն ընտրողների հետ: Ուստի, մեծամասնական համակարգով ընտրված պատգամավորը, որպես կանոն, լինելով կուսակցական, ենթարկվում է կուսակցական կարգապահությանը:

Հարկ ենք համարում ընդգծել պատգամավորի կարգավիճակի հետևյալ տարրերը՝ պատգամավորի մանդատը, պատգամավորի իրավասությունը (պատգամավորների գործառույթների իրականացման ընթացքում պատգամավորի իրավունքներն ու պարտականությունները), պատգամավորական գործունեության երաշխիքները:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ընդհանուր կանոնի համաձայն, պատգամավորի իրավական կարգավիճակի հիմունքները հռչակվում են պետության սահմանադրությամբ, իսկ ավելի մանրամասն՝ հատուկ օրենքներով կամ պալատների կանոնակարգով: Այս հարցում ևս իրավագետների մոտ միասնական

³⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխ. 27.11.2005թ.), հոդվ. 94, <http://www.president.am/hy/constitution-2005/,/10.09.2020/>:

կարծիք չի ձևավորվել: Այսպես, Մ. Վ. Վարլենն ուսումնասիրության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ պատգամավորի սահմանադրական-իրավական կարգավիճակն անհրաժեշտ է բաժանել երկու բաղկացուցիչ տարրի (մասերի)՝ հիմնական և երկրորդական³¹: Հիմնական տարրերն են՝ պատգամավորի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը՝ ամրագրված իրավական նորմերով և ապահովված համապատասխան երաշխիքներով: Երկրորդին տարրերն են՝ տարիքը, պատգամավորների ընտրության կարգը, պատգամավորի մանդատի ձևը և բովանդակությունը: Իր հերթին, Ի. Ա. Ալեքստրովան պատգամավորի կարգավիճակի տարրերի շարքին դասում է պատգամավորական մանդատի ժամկետը, պատգամավորի իրավունքները, պարտականությունները, գործունեության երաշխիքները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատգամավորական լիազորությունների դադարման հիմքերը³²: Իր հերթին, Օ. Ա. Մատվեևան առանձնացնում է պատգամավորի սահմանադրական-իրավական կարգավիճակի այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ պատգամավորի մանդատի ծագումը և գործունեության ժամկետը, դրա քաղաքաիրավական բնույթը, խորհրդարանի անդամի գործառույթները և լիազորությունները, պատգամավորական գործունեության երաշխիքները³³:

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք առանձնացնել պատգամավորի իրավական կարգավիճակի կառուցվածքային հետևյալ տարրերը. 1)Պատգամավորական մանդատի քաղաքաիրավական բնույթը, 2) պատգամավորական մանդատի ծագման և դադարման հիմքերը, գործողության ժամկետը, 3) պատգամավորի լիազորությունները՝ իրավունքները և պարտականությունները, 4) պատգամավորի գործունեության երաշխիքները, 5)պատգամավորի հաշվետվությունը, վերահսկողությունը և պատասխանատվությունը:

Հայտնի է, որ Ազգային ժողովի աշխատանքի կազմակերպման ձևերից է նաև պատգամավորի գործունեությունը: Առանձնացվում է պատգամավորական գործունեության երկու ուղղություն՝ Ազգային ժողովում և ընտրողների շրջանում: Ազգային ժողովում պատգամավորի գործունեությունը հիմնականում դրսևորվում է վերջինիս պարտականությամբ՝ ակտիվորեն մասնակցել Ազգային ժողովի և նրա մարմինների աշխատանքներին:

³¹ Տե՛ս Варлен М. В., Институт депутатского мандата в теории и практике народного представительства в России, дисс.... док. юрид. наук., М., 2012, С.144:

³² Տե՛ս Алебастрова И. А., Конституционное право зарубежных стран. Учеб. Пос., М., 2001, с. 224:

³³ Մանրամասն տես Матвеева О. М. Правовое положение депутата в парламентах стран Западной Европы, дисс. канд. юрид. наук, Екатеринбург, 1994.

Պատգամավորը պետք է մշտական կապի մեջ լինի իր ընտրողների հետ, կատարի քաղաքացիների ընդունելություն, ուսումնասիրի և գործող օրենսդրությանը համապատասխան ընթացք տա ընտրողներից ստացված առաջարկություններին, դիմումներին ու գանգատներին:

Կատարած ուսումնասիրության հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ պատգամավորի կողմից դիմումներում ու գանգատներում բովանդակված գաղափարների ամփոփումը, որի արդյունքները պատգամավորը ներկայացնում է Ազգային ժողով, պետք է հանդիսանան օրենսդիր իշխանության գործունեության հիմքը: Այսինքն, ընդունվող օրենքները պետք է լինեն ռեալ և պարզաճ լուծում տան հասարակության և անձի արջև ծառացած խնդիրներին, ինչը մեր օրերում, ցավոք սրտի, գրեթե չի իրականացվում:

Ինչ վերաբերվում է պատգամավորի իրավունքների, լիազորությունների, ինչպես նաև երաշխիքների շրջանակին, ապա 2015թ.-ի սահմանադրական բարեփոխման և պառլամենտական կառավարման մոդելին անցում կատարելուց հետո, դրանք էականապես ընդլայնվել են:

Ընդհանուր առմամբ, իրավաբանական գրականությունում առանձնացվում են պատգամավորի իրավական և սոցիալական երաշխիքների շրջանակները: Պատգամավորի անձեռնմխելիության (իրավական երաշխիքի) միջազգային փորձն ունի երկու բաղադրիչ՝ ինդեմնիտետ և իմունիտետ: Պատգամավորի ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի կարծիքի ազատ արտահայտումը պատգամավորական գործունեության շրջանակներում՝ իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո: Իր հերթին, պատգամավորական իմունիտետն ապահովում է պատգամավորի իրավական պաշտպանությունը քրեական հետապնդումից՝ ցանկացած արարքի համար, եթե առկա չէ պառլամենտի համաձայնությունը:

Գիտահետազոտական խմբի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ իրական ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություններում գործում են պատգամավորի գործունեության երաշխիքների երկու հիմնական խումբ, որոնք անմիջականորեն կապված են վերջինիս գործունեության վայրի հետ: Դրանք են՝ 1) խորհրդարանում և նրա մարմիններում պատգամավորի գործունեությունն ապահովող երաշխիքները, 2) ընտրատարածքում պատգամավորի գործունեությունն ապահովող երաշխիքները:

Խորհրդարանում և նրա մարմիններում պատգամավորի գործունեությունն ապահովող երաշխիքների իրականացումը, Ազգային ժողովում պատգամավորին տեղեկատվությամբ ապահովելու պարտականությունը դրված է Աշխատակազմի վրա: Այսպես, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի

160-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումն իրականացնում:

Միևնույն ժամանակ, ընտրատարածքում պատգամավորի գործունեության կարևոր երաշխիքներից է այն, որ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելության կազմակերպման համար: Հարկ է նշել, որ ընտրատարածքում բնակչության հետ հանդիպումների ընթացքում և այլ իրավիճակներում ոչ իրավաչափ նպատակներ հետապնդող անձինք կարող են խոչընդոտել պատգամավորի գործունեության իրականացմանը: Հետևաբար, պատգամավորի բնականոն գործունեության ապահովման համար կարևոր երաշխիք է հանդիսանում «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը համաձայն որի, ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է աջակցել պատգամավորներին իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, եթե առանձին քաղաքացիներ չեն ենթարկվում այդ անձանց օրինական պահանջներին կամ խոչընդոտում են նրանց պաշտոնական գործունեության իրականացմանը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ ՄԻԵԴ) կարևորվում է պառլամենտական համակարգում պատգամավորի իրավական և սոցիալական երաշխիքների իրացման ապահովման հիմնախնդրի շրջանակներում պետության հայեցողության սահմանների հստակեցումը, ինչը հնարավորություն է ընձեռում պատգամավորին լիարժեքորեն իրականացնել իր ներկայացուցչական մանդատը:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընգծել, որ հաշվետու ժամանակաշրջանում գիտական խմբի ուշադրության կիզակետում են գտնվել նաև խնդիրներ կապված ՀՀ Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների լիազորությունների առանձնահատկություններին: Հայտնի է, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը: Վերջինիս լիազորություններն իրականացնելիս, նախագահում է Ազգային ժողովի նիստերը, գումարում է Ազգային ժողովի արտահերթ նիստեր և նստաշրջաններ, շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով, և այլն: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գիտական խմբի ուշադրության

կենտրոնում է նաև ներկայիս սահմանադրաիրավական բարեփոխումները, որոնք կապված են օրենսդրական նախաձեռնության իրավունքի, ինչպես նաև օրենքի ստորագրման և հրապարակման փոփոխված գործընթացը: Օրինակ, ՀՀ Ազգային ժողովի նախագահը հանրապետության նախագահին է ուղարկում Ազգային ժողովի ընդունած օրենքները, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումները, ինչպես նաև Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները:

Հարկ ենք համարում նշել, որ գիտական խմբի անդամները հետազոտվող թեմայի շրջանակներում հանդես են եկել գիտաժողովներում, կլոր-սեղան քննարկումներում: Կատարված աշխատանքների արդյունքները արտացոլվել են տպագրված ուսումնական ձեռնարկում և մի շարք գիտական հոդվածներում, ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր գիտական հանդեսներում, այդ թվում զետեղված Scopus շտեմարանում: Շուտով գիտական հանրությանն է ներկայացվելու նաև գիտական խմբի կոլեկտիվ մենագրությունը:

Ստորև ներկայացվում են գիտական հոդվածները.

1. **Կոստանյան Գ., Ղազանչյան Լ.Ա.,** Պառլամենտական իրավունքի հիմունքները Հայաստանի Հանրապետությունում, (ուսումնամեթոդական ձեռնարկ), Ե., Լիմուշ հրատ., 112 էջ:
2. **Սաֆարյան Գ., Մուրադյան Լ.,** Իրավաստեղծ գործունեության կատարելագործման և ազգային օրենսդրության համակարգի զարգացման հիմնական ուղղությունները//Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. Մարտահրավերներն ու դրանց լուծումները. Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Եվրոպրինտ, 2019, էջ 218-236:
3. **Казанчян Л.А.** Законодательная и исполнительная власть как гарант защиты правового положения личности// Евразийский юридический журнал. № 5 (144). 2020.С. 93-95.
4. **Казанчян Л.А.** Некоторые аспекты правового положения личности в контексте конституционных реформ в Республике Армения// Евразийский юридический журнал. № 5 (144). 2020.С.125-128.
5. **Казанчян Л.А.** Процедуры рассмотрения и принятия законопроектов выделенных в национальном собрании Республики Армения //Научный журнал “Юридический факт”. Кемерово. №110. 2020. С.15-17.

6. **Костанян Г.С., Казанчян Л.А.** Некоторые особенности структуры современного парламента//Научный журнал «Юридический факт», №103.2020. С.14-18.
7. **Казанчян Л.А.** Некоторые особенности функционирования современного парламента //Научный журнал «Юридический факт», №97. 2020. С.35-38.
8. **Казанчян Л.А. Костанян Г.С.** О некоторых особенностях пределов усмотрения государства, Проблемы развития армянского общества в современную эпоху: вызовы и пути их решения. Сборник научных статей. Ереван. Европринт. 2019.С. 207-221.
9. **Костанян Г.С., Казанчян Л.А.** Особенности права на получение защиты и юридической помощи в контексте постановлений европейского суда по правам человека//Научный юридический журнал «Юридический факт», Кемерово, Выпуск №78. 2019. С. 21-28.
10. **Костанян Г.С. Казанчян Л.А.** Особенности презумпции невиновности в контексте постановлений европейского суда по правам человека// Научный юридический журнал «Юридический факт», Кемерово, Выпуск №70. 2019. С. 56-59.
11. **Костанян Г.С., Казанчян Л.А.** Особенности правового статуса депутата национального собрания Республики Армения// The Scientific Heritage, Budapest, Hungary.№49(2020). P.6, p. 51-54.
12. **Костанян Г.С., Казанчян Л.А.** Общая характеристика законодательного процесса в Республике Армения// The Scientific Heritage, Budapest, Hungary.№50 (2020). P.4, p.46-50.
13. **Kazanchian L.A.** Features of Fundamental Rights in the Context of the Philosophy of Law//Wisdom, № 1(14),2020, p.159-165.
14. **Kazanchian L.A.** Features of Human Dignity in the Context of the Modern Philosophy of Law// Wisdom, № 2(15),2020, p.147-152.

**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի գիտական խմբի ղեկավար,
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Ա.Հ. Խաչատրյան

**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի տնօրեն,
Իրավաբանական գիտությունների թեկնածու**

Լ.Ա. Ղազանչյան

**«ՀԱՅՐԱՊԵՏ ԴԻ ՄԱՐՏԻՆԻ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ»**

**ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
(ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ - 01.07.2020-30.09.2020)**

Հաշվետու ժամանակահատվածում գիտական ծրագրի շրջանակներում աշխատանքներ են կատարվել հայ վաճառական Հայրապետ դի Մարտինի նամակագրական ժառանգությունը համաշխարհային պատմության տեսանկյունից ուսումնասիրելու ուղղությամբ: Մասնավորապես՝ ուսումնասիրությունը կենտրոնացած է եղել այն հարցի վրա, թե հայկական առևտրական սկզբնաղբյուրների այս խումբը ինչ նպաստ կարող է բերել 17-18-րդ դարերի միջերկրածովյան առևտրի ու նրանում ներգրավված ժողովուրդների փոխշփումների հետազոտմանը՝ հարակից հարցադրումներով հանդերձ:

17-18-րդ դարերում համաշխարհային առևտրում Միջերկրական ծովի ու միջերկրածովյան նավահանգիստների դերն ու ազդեցությունը նկատելիորեն նվազել էր՝ իր տեղը զիջելով օվկիանոսային ուղիներին: Դրա հետևանքով Վենետիկի, Ջենովայի, Մարսելի և մյուս նավահանգիստ-քաղաքների առևտրական գերակայությունը նահանջում էր՝ հակառակ հյուսիսեվրոպական քաղաքների (Ամստերդամ, Համբուրգ ևն) ազդեցության մեծացման: Հայրապետ դի Մարտինի նամակները օգնում են նոր լույս սփռելու 17-18-րդ դարերի սահմանագծին միջերկրածովյան նավահանգիստներում առևտրի կազմակերպման վրա: Հայկական առևտրական նամակները թույլ են տալիս Վենետիկում ապրող վաճառականի աչքերով հաղորդակից լինելու միջերկրածովյան նավահանգիստների թուլացող առևտրական ազդեցությանը: Օրինակ, 1701 թ. օգոստոսի 23-ին Լիվոռնոյում ապրող իր գործընկեր Դավիթին Հայրապետը գրում էր. «Այ պարօն, քաղաքըս հենց կապ է ընկել, որ տե՛ր Աստուածըն մին դուռն բանայ ողորմութեան, որ առք և ծախս լինի, թե չե քաղաքս ալիշվերիշն կապվել այ: Տե՛ր Աստուածըն բանայ դուռն ողորմութեան բազըկանին, որ ոխչ ուրախանան»: Աստծուց Վենետիկում առևտրի աշխուժացում ակնկալող Հայրապետը չէր էլ կարող գլխի ընկնել, որ համաշխարհային առևտրում տեղի էր ունեցել շրջադարձ դեպի օվկիանոսային ուղիներ: Բացի սրանից, Հայրապետի նամակները հսկայական քանակությամբ տեղեկատվություն են պարունակում այն ապրանքատեսակների ու դրանց գների մասին, որոնք

շրջանառվում էին Վենետիկում ու Միջերկրական ծովի ափերին ընկած այլ քաղաքներում: Մի օրինակ. 1704 թ. դեկտեմբերի 19-ին Հռոմում բնակվող առևտրական գործընկեր Մկրտումին հղած նամակում Հայրապետը գրում էր. «Գրել աս, թե 8 տուկատ է ծախվում Վենետիկումն: Էտ ով է առել 8 տուկատ ըռեվանդ, Վենետիկումս կամ Լիվոռնայ 6 մառչիլ է, Էտ ոխչ սուտ խօսկ է, Էսօր տեղս ժբ (12) տուկատ է ծախվում, ախբեր»: Այս հատվածը, որը վերաբերում է «ըռեվանդի»՝ խավարծիլի արմատի գնին, ընդամենը մեկն է այն բազմահազար օրինակներից, որոնք հանդիպում են Հայրապետի նամակներում և որոնք կարող են իրենց նպաստը բերել միջերկրածովյան առևտրի «գների պատմությանը»:

Որոշ աշխատանքներ են կատարվել նաև ուսումնասիրելու այն հարցը, թե Վենետիկի տարբեր առևտրական համայնքների փոխշփումներն ինչպես են արտացոլվել Հայրապետի նամակներում: Այս տեսանկյունից ևս բազմաթիվ օգտակար վկայություններ կարելի է գտնել հայ վաճառականի նամակագրական ժառանգությունում: Շատ են հատկապես հայերի ու հրեաների՝ որպես Վենետիկի երկու կարևոր ազգային փոքրամասնությունների փոխշփումների մասին տվյալները: Իր գործընկեր Դավութին Հայրապետը գրում էր. «Եւ աստառն շատ ամ ման եկել, մին էլ գնամ ջոհուտի մահլէն, տեսնում ընկանի՝ կառում»: «Ջոհուտի մահլէն» հրեաների թաղամասն էր՝ հրեական գետտոն, ուր Վենետիկի հայ վաճառականները հաճախ էին գնում՝ հաղորդակցության մեջ մտնելով հրեաների հետ: Հրեաների ու այլ ժողովուրդների հիշատակությունները բազմաթիվ են՝ հիմք հանդիսանալով Վենետիկի ազգային փոքրամասնությունների փոխշփումների հետազոտության համար:

Ուսումնասիրվել է նաև այն հարցը, թե վաճառականի կենսակերպը, մտածելակերպն ու հոգեբանությունն ինչպես են արտացոլվել Հայրապետի նամակներում: Պետք է նկատի ունենալ, որ Հայրապետն այս դեպքում հանդես է գալիս ոչ թե որպես սոսկ անհատ, այլ որպես 17-18-րդ դարերի սահմանագծին միջերկրածովյան նավահանգստում ապրած վաճառականի տիպական օրինակ, որի աշխարհայացքն ընդհանրական կարող է լինել ժամանակաշրջանի համար: Նամակներում Հայրապետն ու նրա գործընկեր վաճառականները հանդես են բերում անմիջականություն, ազատորեն պատմում են իրենց առօրյա կենսակերպից, իրենց ամենօրյա հոգսերից, ներկայացնում տարբեր հարցերի շուրջ իրենց տեսակետերն ու դիտարկումները, իսկ այս ամենը պատմաբանի համար հիանալի գործիք է՝ ուսումնասիրելու «վաճառականի հոգեբանությունը»: Մի հետաքրքիր օրինակ. Սահակին ուղղված նամակում Հայրապետը գրում էր. «Հախ է, որ աշխարհի խօսկն այս է, որ կասեն՝ թե ուզես, որ մարդ ճանանչես, խըտուրն հաց կեր, և կամ ալիշվերիշ

արայ»։ Փաստորեն, մարդուն լավ ճանաչելու երկու լավագույն միջոցները, ըստ Հայրապետի, նրա հետ հաց կիսելն ու առևտուր անելն էին։

Ինչ վերաբերում է ուսումնասիրության արդյունքների հանրայնացմանը, ապա Covid-19-ով պատճառով նախապես պլանավորված գիտաժողովները հետաձգվել են, իսկ ուսումնասիրության արդյունքների մի մասը հրատարակվել է գիտական հոդվածի տեսքով։

ԱՅՄՊԻՍՈՎ՝ գիտական ծրագրի շրջանակներում չորս եռամսյակների ընթացքում կատարված աշխատանքները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

- Հավաքվել և ի մի է բերվել Հայրապետ դի Մարտինի նամակագրական ժառանգությունը, որը հասնում է շուրջ 2000 օրինակները պահպանվել են Վենետիկի պետական արխիվում ու Բրիտանական գրադարանում,
- Գիտահետազոտական աշխատանք է կատարվել Լոնդոնի Բրիտանական գրադարանում, որտեղ պահպանվել է Հայրապետի նամակների հավաքածուներից մեկը,
- Ընթերցվել է Հայրապետի նամակների շուրջ ¼ մասը, այն է՝ մոտ 500 նամակ, որից դուրս է բերվել դրանցում շրջանառված առևտրական արժեքավոր տեղեկատվություն,
- Ուսումնասիրվել է Հայրապետի ծագումը, ինչպես նաև՝ նրա տոհմի՝ Վելիջանյանների վաճառականական ընտանիքի պատմությունն իր ընդհանուր գծերով,
- Քննարկվել է հայ վաճառականական նամակը որպես առանձին երևույթ և որպես վաճառականների միջև առևտրական տեղեկատվության փոխանցման հիմնական միջոց ու շրջանադարձից մինչև վաղ արդի դարաշրջան,
- Լուսաբանվել է Գերաք Միրմանների հայկական առևտրական չուսումնասիրված տոհմի պատմությունը, տոհմ, որի գործակալն էր Հայրապետը,
- Որոշակի լույս է սփռվել միջերկրածովյան նավահանգիստներում հայ ու եվրոպացի վաճառականների փոխառնչությունների հարցի վրա,
- Ցույց է տրվել, թե Հայրապետի նամակներն ինչ նպաստ կարող են բերել միջերկրածովյան առևտրի պատմությանը,
- Հիմք է նախապատրաստվել առաջին անգամ ուսումնասիրվող Հայրապետ դի Մարտինի նամակագրական ժառանգության հետագա ուսումնասիրության համար։

Գիտական աշխատանքի հիմնական արդյունքների ներկայացումը.

Գիտական զեկուցում՝

1. «Ուսումնասիրելով հայկական առևտրական նամակագրությունը. Միջերկրական ծովի «առևտրի գաղտնիքները» և Հայրապետի դի Մարտինի նամակները», «Միջերկրածովյան համայնքները հին ժամանակներից մինչև մեր օրերը» խորագրով միջազգային գիտաժողով, Կենտրոնական Եվրոպական համալսարան, Բուդապեշտ, Հունգարիա

Գիտական հոդվածներ՝

2. Բալդարյան Սարգիս, Առևտրական տեղեկատվությունը և վաճառականները ուշ միջնադարից մինչև վաղ արդի դարաշրջան, «Պատմություն և քաղաքականություն», 2020, թիվ 2 (7), էջ 60-70:
3. Baldaryan Sargis, Mediterranean Trade and Hierapet di Martin's Letters, "Gitakan Artsakh", 2020, vol. 3 (տպագրությունը՝ մինչև 2020 թ. հոկտեմբերի 15):

Ծրագրի կատարող՝

Սարգիս Բալդարյան

26.09.2020

